Հավելված
ՀՀ վարչապետի
N 11-Լ որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2019 թ.
հունիսի 1-ի N 666-Լ
որոշման

# ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ

| N | Միջոցառման նկարագրությունը | Գործողությունը (գործողությունները) | Կատարման ժամկետը | Կատարողը | Կատարողական ցուցանիշը (KPI) | Ակնկալվող արդյունքը | ԵՄ աջակցության ձևաչափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **ԲԱԺԻՆ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ** | | | | | | |
| **1.** | Արդարադատության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ ՀՀ-ԵՄ ռազմավարական քաղաքականության երկխոսության խորացում<br>(Համաձայնագրի հոդված 4) | Անցկացնել ՀՀ-ԵՄ արդարադատության ոլորտի ռազմավարական քաղաքականության երկխոսության նիստեր՝ քննարկելով արդարադատության ոլորտի բարեփոխումների ընթացքը և դրանց ԵՄ աջակցության ուղղությունները | Շարունական | Արդարադատության նախարարություն | ՀՀ-ԵՄ արդարադատության ոլորտի ռազմավարական քաղաքականության երկխոսության պարբերական նիստերը կազմակերպվում են՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ | Արդարադատության ոլորտում ՀՀ-ԵՄ հարաբերությունների խորացում, համագործակցության ընդլայնում, բարեփոխումների թափանցիկության և հաշվետվողականության ապահովում | Տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2.** | Անվտանգության և պաշտպանության քաղաքականության ոլորտում երկխոսության ակտիվացում<br><br>(Համաձայնագրի հոդված 5) | Հատկացնել ոչ մահաբեր միջոցներ՝ պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում | Շարունակական | Պաշտպանության նախարարություն | ՀՀ-ին վրանային ավանը հատկացված է | Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության ոլորտում երկխոսությունը և համագործակցության զարգացում | Տեխնիկական աջակցություն |
| **3.** | Միջազգային քրեական դատարանի կանոնադրության և դրան հարակից փաստաթղթերի վավերացում<br><br>(Համաձայնագրի հոդված 6) | Ընդունել միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը վավերացնելու և դատարանի կանոնադրությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարության վերաբերյալ օրենք | 2025թ. 4-րդ կիսամյակ | Արդարադատության նախարարություն | Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը վավերացնող օրենքն ընդունված է Ազգային ժողովի կողմից | ՀՀ-ԵՄ սերտ համագործակցությունը իրականացվել է ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների կանխարգելման գործում՝ օգտվելով համապատասխան երկկողմ և բազմակողմ շրջանակներից | Տեխնիկական աջակցություն |
| **4.** | ՀՀ մասնակցության ապահովում ԵՄ Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականության ներքո գործող ճգնաժամային կառավարման առաքելություններին<br><br>(Համաձայնագրի հոդված 7) | ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների և ԵՄ համապատասխան հաստատությունների հետ աշխատանքային քննարկումների անցկացնել, հստակեցնելու առաքելությունների շրջանակը/տեսակը և ՀՀ մասնակցության ձևաչափը | Շարունակական | Պաշտպանության նախարարություն | ՀՀ-ԵՄ Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում ՀՀ մասնակցության շրջանակը սահմանելու մասին համաձայնագիրը վավերացված է | Հակամարտության կանխարգելման և ճգնաժամի կառավարման ոլորտում գործնական համագործակցության զարգացում, ճգնաժամի կառավարման քաղաքացիական և ռազմական գործողությունների համատեքստում համապատասխան վարժանքների և վերապատրաստման դասընթացների իրականացում | Փորձագիտական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **5.** | Երկկողմ, տարածաշրջանային և միջազգային մակարդակով ահաբեկչության (իր բոլոր ձևերով և դրսևորումներով) կանխարգելում և հակազդում<br><br>(Համաձայնագրի հոդված 11) | Գործուն ջանքեր գործադրել ՀՀ պետական մարմինների և ԵՄ երկրների իրավապահ մարմինների և շահագրգիռ միջազգային կազմակերպությունների միջև համագործակցության ընդլայնման և տեղեկատվության արդյունավետ փոխանակման հարցում | Շարունական | Ազգային անվտանգության ծառայություն | ՀՀ և ԵՄ իրավասու մարմինների և շահագրգիռ միջազգային կազմակերպությունների միջև տեղեկատվությունը փոխանակվում է | Ահաբեկչության, ծայրահեղականության և միջազգային իրավունքով արգելված այլ գործողությունների հակազդմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացում | Փորձագիտական և տեխնիկական աջակցություն |
| **ԲԱԺԻՆ 2. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** | | | | | | | |
| **6.** | Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության վերաբերյալ համապարփակ օրենսդրության և համապատասխան կառուցակարգերի նախատեսում<br><br>(Համաձայնագրի հոդված 12<br><br>Խորհրդի 2000թ. հունիսի 29-ի 2000/43/ԵՀ հրահանգ) | 1.Ընդունել «Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքը<br>2.Ստեղծել իրավահավասարության ապահովման մարմին | 2026թ. 4-րդ եռամսյակ | Արդարադատության նախարարություն | 1. Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության վերաբերյալ համապարփակ օրենսդրությունն ընդունված է<br>2.Գործում է խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մարմինը | Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության վերաբերյալ համապարփակ օրենսդրության պայմաններում Մարդու իրավունքների պաշտպանին խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մարմնի լիազորություններով օժտում | Փորձագիտական և տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **7.** | Անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության լավարկում և համապատասխանեցում ԵՄ չափանիշներին<br><br>(Համաձայնագրի հոդված 13<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2002թ. հուլիսի 12-ի 2002/58/ԵՀ հրահանգ) | 1.Լրամշակել անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ներպետական օրենսդրությունը<br>2.Ստեղծել անձնական տվյալների պաշտպանության անկախ լիազոր մարմին | 2027թ. 4-րդ եռամսյակ | Արդարադատության նախարարություն | 1.Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ խմբագրված օրենքն ընդունված է<br>2.Գործում է անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվության ազատության ոլորտի լիազոր անկախ մարմինը | 1.Անձնական տվյալների պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրությունը համապատասխանում է ԵՄ չափանիշներին<br>2. ԵՄ չափանիշներին համապատասխան գործում է ոլորտի լիազոր մարմինը | Փորձագիտական և տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս<br><br>Թվինինգ |
| **8.** | Օտարերկրացիներին և ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի գործընթացի և ապաստանի կարգավիճակի հասանելիության ապահովման համակարգի բարելավում, ապաստան հայցողների ընդունման և ժամանակավոր կացության տրամադրման համար նոր կենտրոնի կառուցում<br><br>(Համաձայնագրի հոդված 14, կետ (b)) | 1.Փոփոխություններ և լրացումներ կատարել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում<br>2. Ներդնել ապաստանի հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգ<br>3. Կառուցել և կահավորել նոր կենտրոն՝ ապաստան հայցողներին ընդունելու և ժամանակավոր կացարան տրամադրելու համար | 1. 2026թ. 4-րդ եռամսյակ<br><br>2. 2026թ. 3-րդ եռամսյակ<br><br>3. 2025թ. 4-րդ եռամսյակ | Ներքին գործերի նախարարություն | 1. «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծն ընդունված է<br>2. Ապաստանի հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգը ամբողջությամբ ներդրած է և շահագործվում է<br>3. Ապաստան հայցողներին ընդունելու և ժամանակավոր կացարան տրամադրելու համար նոր կենտրոնը կառուցված և կահավորված է | Ապաստանի համակարգի ներդրում, որը հասանելի կդարձնի միջազգային պաշտպանությունը՝ միջազգային պարտավորություններին համապատասխան, ապաստանի հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգի արդյունավետ գործարկում և նոր կենտրոնի կառուցում | Տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **9.** | Ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկում, որը մեկ միասնական հարթակում կներառի ԵՄ անդամ պետությունների և ՀՀ պատկան մարմինների ներկայացուցիչ ներին<br><br>(Համաձայնագրի հոդված 15, կետ (b)) | Գործարկել ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավար ման համակարգ, որը մեկ միասնական հարթակում կներառի ԵՄ անդամ պետությունների և ՀՀ պատկան մարմինների ներկայացուցիչներին | Շարուն ական | Ներքի ն գործեր ի նախա րարութ յուն | Ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգը, որը մեկ միասնական հարթակում ներառում է ԵՄ անդամ պետությունների և ՀՀ պատկան մարմինների ներկայացուցիչներին, գործարկված է | Ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավար ման համակարգի գործարկում, որը մեկ միասնական հարթակում ներառում է ԵՄ անդամ պետությունների և ՀՀ պատկան մարմինների ներկայացուցիչներին | |
| **10.** | ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագրով սահմանված հենանիշների կատարում<br><br>(Համաձայնագրի հոդված 15 (2)) | Մուտքի արտոնագրերի ազատականացման նպատակով ԵՄ փործագիտական առաքելությունների կողմից կազմակերպել այցեր Հայաստան և հասցեագրել ոլորտային կարիքները | Շարուն ական | Ներքի ն գործեր ի նախա րարութ յուն | Մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագիրը իրականացված է | ՀՀ և ԵՄ քաղաքացիների միջև շարժունակության և մարդկանց տեղաշարժի խթանում, միջմշակութային կապերի խորացում | Փործագ իտակա ն աջակցո ւթյուն |
| **ԲԱԺԻՆ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ** | | | | | | | |
| **ԳԼՈՒԽ 1 ՀԱՐԿՈՒՄԸ** | | | | | | | |
| **11.** | Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման միջազգային չափանիշների գործարկման ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 26 և 27) | 1.Իրականացնել և համակարգել ըստ հարցման տեղեկությունների փոխանակման վերաբերյալ փործագիտական գնահատման հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների տեղայնացման աշխատանքները | 2026թ. 4-րդ եռամսյ ակ | Պետա կան եկամու տների կոմիտ ե | Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակմանն առնչվող իրավական կարգավորումներն ընդունված են, գործող իրավական ակտերում համապատասխան փոփոխությունները և լրացումները իրականացված | Հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման և թափանցիկության միջազգային չափանիշների գործարկում, այլ պետությունների հետ միջազգային համագործակցության բարելավում, հարկային վարչարարության | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2. Ներդնել և գործարկել ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտը | | | են | իրականացման արդյունավետության բարձրացում | |
| **12.** | ՏՀԶԿ «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ» (BEPS) ծրագրի՝ հարկերի վճարումից խուսափման դեմ ուղղված վարչարարական գործիքակազմի գործարկմանն ուղղված աշխատանքների կատարում<br><br>(Համաձայնագրի հոդված 27) | Իրականացնել ՏՀԶԿ BEPS ծրագրի ստանդարտներից բխող կարգավորումների ներդրումը, որոնք ուղղված են հարկային համաձայնագրերի չարաշահման, ագրեսիվ հարկային պլանավորման միջոցով հարկերից խուսափման դեմ պայքարին | 2026թ. 4-րդ եռամսյակ | Պետական եկամուտների կոմիտե | Հարկերի վճարումից խուսափման դեմ պայքարին ուղղված ՏՀԶԿ BEPS ծրագրից բխող կարգավորումների ներդնումը և գործողությունները գործարկված են | Հարկերից խուսափման դեմ պայքարի արդյունավետության բարձրացում՝ գործարկված ՏՀԶԿ BEPS ծրագրի շրջանակում մշակված կարգավորումներով, ինչի արդյունքում ապահովվում է միջազգային չափանիշներին համապատասխան հարկային թափանցիկություն և արդար մրցակցային պայմաններ | |
| | **ԳԼՈՒԽ 2 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ** | | | | | | |
| **13.** | Ժողովրդագրական վիճակագրության կատարելագործում՝ հիմնվելով ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքների վրա<br><br>(Համաձայնագրի հոդված 32 կետ (a)) | 1.Ապահովել ՀՀ միջպետական միգրացիայի ելքային տվյալների ստացումը՝ ՍԷԿՏ համակարգի տվյալների հիման վրա՝ Արմստատի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի համաձայն<br>2. Իրականացնել միջմարդահամարային տարիների (2011-2022թթ.) ժողովրդագրական տվյալների վերահաշվարկներ | 2027թ. 4-րդ եռամսյակ | Վիճակագրական կոմիտե | 1.ՎՊԽ որոշմամբ սահմանված է ՀՀ միջպետական միգրացիայի ելքային տվյալների ստացման ձևաչափը<br>2.Ժողովրդագրական տվյալների դինամիկ շարքերի վերաբերյալ տեղեկագրի տվյալները վերհաշվարկված են | Ժողովրդագրական վիճակագրության կատարելագործում՝ հիմնված ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքների վրա | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **14.** | Գյուղատնտեսական վիճակագրության կատարելագործում՝ հիմնված գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի վրա<br><br>(Համաձայնագրի հոդված 32 կետ (b)) | Ստեղծել գյուղացիական տնտեսությունների ռեգիստր | 2027թ. 4-րդ եռամսյակ | Վիճակագրական կոմիտե | Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրը գործում է | Կատարելագործված գյուղատնտեսական վիճակագրություն՝ հիմնված գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի վրա | Թայեքս |
| **15.** | Մասնավոր հատվածի ուսումնասիրությունների և մշակումների վիճակագրության ներդրում (Համաձայնագրի հոդված 32 կետ (c)) | 1. Մշակել ուսումնասիրությունների և մշակումների վիճակագրության մասնավոր հատվածի հետազոտության հարցաթերթը և դրա լրացման կարգը<br>2. Կազմել կազմակերպությունների ընտրանքը, իրականացնել փորձնական հետազոտություն | 2027թ. 4-րդ եռամսյակ | Վիճակագրական կոմիտե | 1.Մասնավոր հատվածի հետազոտության հարցաթերթը և լրացման կարգը հաստատվել է ՎՊԽ որոշմամբ<br>2. Փորձնական հետազոտությունն իրականացված է | Ներդրված մասնավոր հատվածի ուսումնասիրությունների և մշակումների վիճակագրություն | Թվինինգ |
| **16.** | Տարածման և տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործում (Համաձայնագրի հոդված 32 կետ (h)) | 1.Նախագծել և գործարկել ժամանակակից կայք, ներդնել ինտերակտիվ վահանակներ և ինտեգրել վիզուալիզացիայի գործիքներ<br>2.Նոր կայքում ներդնել GIS տեխնոլոգիաների, ինտերակտիվ վահանակների և ինֆոգրաֆիկների ստեղծման գործիքներ | 2027թ. 4-րդ եռամսյակ | Վիճակագրական կոմիտե | 1.Ինտերակտիվ վահանակներով և վիզուալիզացիայի գործիքներով ինտեգրված կայքը գործարկվել է<br>2.GIS տեխնոլոգիաների, ինտերակտիվ վահանակների և ինֆոգրաֆիկների ստեղծման գործիքները ներդրվել են նոր կայքում<br>3.SDMX ստանդարտը օգտագործվում է տվյալների փոխանակման համար | Վիճակագրական արտադրության կատարելագործված տարածում և տեղեկատվական տեխնոլոգիաներ | Թվինինգ<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3.Օգտագործել SDMX ստանդարտը տվյալների փոխանակման և տարածման համար, ընդունել համապատասխան գործիքներ<br>4.Ապահովել տվյալների պաշտպանությունը և GDPR պահանջներին համապատասխանությունը | | | 4.Համապատասխանության գնահատման արդյունքներն ապահովված են | | |
| **ԲԱԺԻՆ 4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | | | | | | | |
| **ԳԼՈՒԽ 1 ՏՐԱՆՍՊՈՐՏԸ** | | | | | | | |
| **17.** | Համայնքի տարածքում որոշ կարգերի ավտոտրանսպորտային միջոցներում արագության սահմանափակիչներ տեղադրելու և օգտագործելու պահանջների սահմանում<br><br>(Խորհրդի 1992թ. փետրվարի 10-ի 92/6/ԵՏՀ հրահանգ) | Իրականացնել փոփոխություններ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Ավտոտրանսպորտային միջոցներում արագության սահմանափակիչների տեղադրում, երթևեկության անվտանգության բարձրացում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **18.** | Ճանապարհատրանսպորտային միջոցների՝ ազգային և միջազգային երթևեկության ժամանակ թույլատրելի առավելագույն եզրաչափերը և միջազգային երթևեկության ժամանակ դրանց թույլատրելի առավելագույն զանգվածը սահմանող կարգավորումների վերանայում | Ընդունել ՀՀ կառավարության համապատասխան որոշում | 2021թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարութ | ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ընդունված է | Ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռների փոխադրումների կանոնակարգում, ճանապարհներին հասցվող վնասի նվազեցում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Խորհրդի 96/53/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2015թ. ապրիլի 29-ի 2015/719/ԵՄ հրահանգ) | | | յուն | | | |
| **19.** | Առևտրային տրանսպորտային միջոցների շահագործման համար պիտանիության՝ ճանապարհներին տեխնիկական հսկողության կանոնակարգում<br><br>(2000/30/ԵՀ հրահանգին փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. ապրիլի 3-ի 2014/47/ԵՄ հրահանգ) | Իրականացնել փոփոխություններ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Երթևեկության անվտանգության բարձրացում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թվինինգ<br><br>Թվինինգ |
| **20.** | Ավտոտրանսպորտային միջոցների և դրանց կցորդների շահագործման համար պիտանիության պարբերական տեխնիկական զննության մասին պահանջների սահմանում<br><br>(2009/40/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. ապրիլի 3-ի 2014/45/ԵՄ հրահանգ) | Իրականացնել փոփոխություններ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Երթևեկության անվտանգության բարձրացում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **21.** | Առևտրային տրանսպորտային միջոցների շահագործման համար | Իրականացնել փոփոխություններ «Ճանապարհային | 2027թ. 2-րդ եռամսյ | Տարածքային կառավ | «Ճանապարհային երթևեկության անվտանգության | Երթևեկության անվտանգության բարձրացում | Տեխնիկական աջակցո |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | պիտանիության՝ ճանապարհներին տեխնիկական հսկողության կանոնակարգում<br><br>(2000/30/ԵՀ հրահանգին փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. ապրիլի 3-ի 2014/47/ԵՄ հրահանգ) | երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | ակ | արման և ենթակառուցվածքների նախարարություն | ապահովման մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | | ություն<br><br>Թայեքս<br><br>Թվինինգ |
| **22.** | Վարորդական վկայականների կարգերի ներդնում, վկայականը տրամադրելու պայմանների հստակեցում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2006թ. դեկտեմբերի 20-ի 2006/126/ԵՀ հրահանգ) | 1.Կատարել փոփոխություններ և լրացումներ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում<br>2. Կատարել փոփոխություններ վարորդական վկայականների տրամադրմանն առնչվող իրավական ակտերում | 2020թ. 4-րդ եռամսյակ | Ներքին գործերի նախարարություն | Վարորդական վկայականների մասին «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխությունները կատարված են | 1. Միգրացիայի վիճակագրության կատարելագործում՝ հիմնված տեղեկատվության վարչական աղբյուրների վրա<br>2. Ճանապարհային երթևեկության անվտանգության չափանիշների բարելավում՝ ԵՄ լավագույն փորձին համապատասխան | |
| **23.** | Ճնշման տակ աշխատող շարժական սարքավորումների վերաբերյալ ստանդարտների ապահովում<br><br>(Խորհրդի 76/767/ԵՏՀ, 84/525/ԵՏՀ, 84/526/ԵՏՀ, 84/527/ԵՏՀ և 1999/36/ԵՀ հրահանգներն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2010թ. հունիսի 16-ի 2010/35/ԵՄ հրահանգ) | Ընդունել ճնշման տակ աշխատող շարժական սարքավորումների վերաբերյալ ԵՄ ստանդարտներին համապատասխանության տեխնիկական և վերահսկողական պահանջներ | 2029թ. 4-րդ կիսամյակ | Կսահմանվի ոլորտը համակարգող փոխվարչապետի հանձնարարությամբ | Ճնշման տակ աշխատող շարժական սարքավորումների վերաբերյալ ստանդարտները ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ | Ճնշման տակ աշխատող շարժական սարքավորումների բարձր անվտանգության և դրանց ազատ շրջանառության ապահովում՝ միասնական տեխնիկական և վերահսկողական պահանջների միջոցով | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **24.** | Վտանգավոր ապրանքների ճանապարհային փոխադրումների ստուգումների կանոնակարգում (Խորհրդի 1995թ. հոկտեմբերի 6-ի 95/50/ԵՀ հրահանգին փոխարինող 2022/1999 հրահանգ, Խորհրդարանի և Խորհրդի 2008թ. սեպտեմբերի 24-ի 2008/68/ԵՀ հրահանգ) | Իրականացնել փոփոխություններ «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | 2023թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Վտանգավոր բեռների փոխադրումների գործընթացի կանոնակարգում, երթևեկության անվտանգության բարձրացում | Տեխնիկական աջակցություն Թայեքս Թվինինգ |
| **25.** | Ավտոմոբիլային տրանսպորտում ձայնագրող սարքավորումների տեղադրման հարաբերությունների կանոնակարգում (Խորհրդի 1985թ. դեկտեմբերի 20-ի թիվ 3821/85 կանոնակարգ (ԵՏՀ)) | Իրականացնել փոփոխություններ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | 2021թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Թվային տախոգրաֆի համակարգի կիրառության կանոնակարգում, երթևեկության անվտանգության բարձրացում | Տեխնիկական աջակցություն Թայեքս Թվինինգ |
| **26.** | Ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձանց աշխատաժամանակի, տրանսպորտին առնչվող սոցիալական հարաբերությունների կանոնակարգում (Խորհրդարանի և Խորհրդի | Իրականացնել փոփոխություններ աշխատանքային օրենսգրքում կամ հարակից օրենքներում | 2021թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարութ | Աշխատանքային օրենսգրքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Երթևեկության անվտանգության բարձրացում, ոլորտի սոցիալական բնույթի հստակ կարգավորումների առկայություն | Տեխնիկական աջակցություն Թայեքս Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2002թ. մարտի 11-ի 2002/15/ԵՀ հրահանգ, Խորհրդի թիվ 3821/85 (ԵՏՀ) և թիվ 2135/98 (ԵՀ) կանոնակարգերը փոփոխող և Խորհրդի թիվ 3820/85 կանոնակարգին (ԵՏՀ) փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2006թ. մարտի 15-ի թիվ 561/2006 կանոնակարգ (ԵՀ), Խորհրդի 88/599/ԵՏՀ հրահանգին փոխարինող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006/22/ԵՀ հրահանգ) | | | յուն | | | |
| **27.** | Ավտոճանապարհային փոխադրումներ իրականացնող օպերատորին ներկայացվող պահանջների կանոնակարգում<br><br>(Խորհրդի 96/26/ԵՀ հրահանգին փոխարինող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009թ. հոկտեմբերի 21-ի թիվ 1071/2009 կանոնակարգ (ԵՀ)) | Իրականացնել փոփոխություններ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | 2027թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Փոխադրող կազմակերպությունների գործունեության կանոնակարգում, մրցակցության հավասար պայմանների սահմանում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս<br><br>Թվինինգ |
| **28.** | Որոշ տրանսպորտային միջոցների վարորդների նախնական որակավորման և պարբերական վերապատրաստման կառուցակարգերի սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի | Իրականացնել փոփոխություններ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների | «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Վարորդների որակավորման բարձրացում, երթևեկության անվտանգության բարձրացում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2003թ. հուլիսի 15-ի 2003/59/ԵՀ հրահանգին փոխարինող 2022/2561 հրահանգ) | | | նախապատրաստություն | | | |
| **29.** | Ճանապարհային վճարի գանձման գործընթացի կանոնակարգում, ճանապարհային ցանցի որակի բարելավում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 1999թ. հունիսի 17-ի 1999/62/ԵՀ հրահանգ, Խորհրդարանի և Խորհրդի 2004թ. ապրիլի 29-ի 2004/52/ԵՀ հրահանգ) | Իրականացնել փոփոխություններ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքում կամ հարակից օրենքներում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի կամ հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Ճանապարհային վճարի գանձման գործընթացի կանոնակարգում, ճանապարհային ցանցի բարելավված որակ | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **30.** | Թունելների անվտանգության նվազագույն պահանջների կիրառում<br><br>(Խորհրդի 2004թ. ապրիլի 29-ի 2004/54/ԵՀ հրահանգ) | 1. Թունելի վթարային իրավիճակի դեպքում դրա շահագործումն անհապաղ կասեցնելու, սահմանափակելու կամ դադարեցնելու կարգի սահմանում<br>2. Թունելների անվտանգության նվազագույն պահանջները սահմանելու, թունելների անվտանգության նվազագույն պահանջների ապահովման, թունելների անվտանգության կանխարգելման և պաշտպանական միջոցառումների սահմանում<br>3.Թունելների անվտանգության գծով | 1. 2026թ. 3-րդ եռամսյակ<br>2. 2027թ. 3-րդ եռամսյակ<br>3.2027թ. 4-րդ եռամսյակ<br>4.2028թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 1.Թունելի վթարային իրավիճակի դեպքում դրա շահագործումն անհապաղ կասեցնելու, սահմանափակելու կամ դադարեցնելու կարգն ընդունված է<br>2.Թունելների անվտանգության նվազագույն պահանջները սահմանելու, թունելների անվտանգության նվազագույն պահանջների ապահովման, թունելների անվտանգության կանխարգելման և պաշտպանական միջոցառումները իրականացվում են<br>3.Թունելների անվտանգության գծով | 1.Թունելի վթարային իրավիճակի դեպքում դրա շահագործումն անհապաղ կասեցնելու, սահմանափակելու կամ դադարեցնելու մեթոդական կարգավորում<br>2.Թունելների անվտանգության նվազագույն պահանջները սահմանված են<br>3.Թունելների անվտանգության գծով պատասխանատուի որակավորման նշանակման և պետական ճանապարհային մարմնի հետ համաձայնեցման մեթոդական ապահովում<br>4.Թունելների անվտանգության պարբերական փորձարկման և | Տեխնիկական աջակցություն<br><br>Թվինինգ<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | պատասխանատուի որակավորման նշանակման և պետական ճանապարհային մարմնի հետ համաձայնեցման կարգի հաստատում<br>4. Թունելների անվտանգության պարբերական փորձարկման և զննության իրականացումը, ինչպես նաև թունելներում տեղի ունեցած վթարների վերաբերյալ հաշվետվության ներկայացում | | | պատասխանատուի որակավորման նշանակման և պետական ճանապարհային մարմնի հետ համաձայնեցման կարգն ընդունված է<br>4.Թունելների անվտանգության պարբերական փորձարկումը և զննությունը իրականացվում է, թունելներում տեղի ունեցած վթարների վերաբերյալ հաշվետվությունը առկա է | զննության իրականացում | |
| **31.** | Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման համակարգի ներդնում<br><br>(Խորհրդի 2008թ. նոյեմբերի 19-ի 2008/96/ԵՀ հրահանգ) | 1. Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների անվտանգության աուդիտի իրականցում<br>2. Ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) հետևանքով կրած վնասների միջին հանրային ծախսերի հաշվարկ և վերլուծություն<br>3. Ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատում և ճանապարհային անվտանգության վարկանիշավորում | 1.2027 թ. 4-րդ եռամսյակ<br>2.2027 թ. 1-ին եռամսյակ<br>3.2028 թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 1.Որակավորված ճանապարհային անվտանգության աուդիտորներով ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացում<br>2.ՃՏՊ տվյալների հետևանքով կրած վնասի, միջին հանրային ծախսերի հաշվարկման և վերլուծության իրականացման կարգին համապատասխան՝ ՃՏՊ-ների հետևանքով կրած վնասների միջին հանրային ծախսերի հաշվարկի հաշվետվությունները կամ տեղեկանքները պատրաստված են<br>3.Միջպետական և հանրապետական նշանակության | 1. Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բարձրացում<br>2.ՃՏՊ-ների հետևանքով կրած վնասների միջին հանրային ծախսերի հաշվարկի և վերլուծության արդյունքում համապատասխան միջոցառումների իրականացում<br>3. ՀՀ միջպետական նշանակության ճանապարհների սահմանված երթուղիներ<br>4. Ճանապարհների ենթակառուցվածքի անվտանգության բարելավում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թվինինգ<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ճանապարհների օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության վարկանիշավորումը իրականացված է | | |
| **32.** | Երկաթուղային տրանսպորտի ոլորտի օրենսդրության բարելավում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2012թ. նոյեմբերի 21-ի 2012/34/ԵՄ հրահանգ, Խորհրդարանի և Խորհրդի 2010թ. սեպտեմբերի 22-ի 913/2010/ԵՄ կանոնակարգ ) | Իրականացնել փոփոխություններ «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքի փոփոխություններն ընդունված են | Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության ապահովում | |
| **33.** | Երկաթուղային տրանսպորտի անվտանգության ոլորտի օրենսդրության բարելավում<br><br>(Խորհրդի 95/18/ԵՀ հրահանգ և 2001/14/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2004թ. ապրիլի 29-ի 2004/49/ԵՀ հրահանգին փոխարինող՝ | Իրականացնել փոփոխություններ «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքում և հարակից օրենքներում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարութ | «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքի և հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Երկաթուղային տրանսպորտի անվտանգության մակարդակի բարձրացում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2016թ. մայիսի 11-ի 2016/798/ԵՀ հրահանգ) | | | յուն | | | |
| **34.** | Համայնքի երկաթուղային համակարգում գնացքաքարշեր և գնացքներ վարող մեքենավարների հավաստագրման կանոնակարգում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2007թ. հոկտեմբերի 23-ի թիվ 2007/59/ԵՀ հրահանգ) | Իրականացնել փոփոխություններ «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքում և հարակից օրենքներում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքի և հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Մեքենավարի վկայականի և վարելու իրավունքի սահմանում, մեքենավարների որակավորման ապահովում | |
| **35.** | Երկաթուղային տրանսպորտի անվտանգության ամբողջական կանոնակարգում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2008թ. հունիսի 17-ի 2008/57/ԵՀ հրահանգին փոխարինող ԵՀ 2016/798, ԵՀ 2016/797 հրահանգներ) | Իրականացնել փոփոխություններ «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքում և հարակից օրենքներում | 2025թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքի և հարակից օրենքների փոփոխություններն ընդունված են | Երկաթուղային տրանսպորտի անվտանգության բարեփոխված կանոնակարգում | |
| **36.** | Երկաթգծով և ճանապարհով իրականացվող հանրային ուղևորատար փոխադրումների ծառայություններին առնչվող և հարակից հարաբերությունների | Իրականացնել փոփոխություններ «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքնե | «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքի փոփոխություններն ընդունված են | Մատուցվող ուղևորափոխադրումների ծառայությունների որակի մակարդակի բարձրացում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կարգավորումների վերանայում<br><br>(Խորհրդի 1191/69 և 1107/70 կանոնակարգերին (ԵՏՀ) փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2007թ. հոկտեմբերի 23-ի 1370/2007 կանոնակարգ (ԵՀ)) | | | րի նախա րարութ յուն | | | |
| **37.** | Երկաթուղային տրանսպորտից օգտվող ուղևորների իրավունքներին և պարտականություններին առնչվող կարգավորումների վերանայում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2007թ. հոկտեմբերի 23-ի 1371/2007/ԵՀ կանոնակարգին փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2021թ. ապրիլի 29-ի 2021/782/ԵՄ կանոնակարգ) | Իրականացնել փոփոխություններ «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքում | 2027թ. 2-րդ եռամսյ ակ | Տարած քային կառավ արման և ենթակ առուցվ ածքնե րի նախա րարութ յուն | «Երկաթուղային տրանսպորտի մասին» օրենքի փոփոխություններն ընդունված են | Մատուցվող ծառայությունների որակի և երթևեկության անվտանգության մակարդակների բարձրացում, ուղևորների իրավունքների և պարտականությունների հստակեցում | |
| **38.** | Ծովային փոխադրումների ոլորտի օրենսդրության ընդունում<br><br>(Խորհրդի 1992թ. դեկտեմբերի 7-ի 92/106/ԵՏՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. ապրիլի 23-ի 2009/15/ԵՀ հրահանգ, | Ընդունել ծովային փոխադրումների ոլորտը կանոնակարգող օրենսդրություն | 2029թ. 2-րդ եռամսյ ակ | Տարած քային կառավ արման և ենթակ առուցվ ածքնե րի նախա րարութ յուն | Ծովային փոխադրումների ոլորտը կանոնակարգող օրենսդրությունն ընդունված է | ՀՀ-ում առևտրային ծովագնացության կանոնակարգում | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. ապրիլի 23-ի թիվ 391/2009/ԵՀ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2013թ. նոյեմբերի 20-ի 2013/54/ԵՄ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի թիվ 391/2009/ԵՀ կանոնակարգի 6-րդ և 7-րդ հոդվածների կանոնները սահմանող՝ Հանձնաժողովի 2014թ. հուլիսի 18-ի թիվ 788/2014/ԵՄ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2004թ. ապրիլի 21-ի թիվ 789/2004/ԵՀ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. ապրիլի 23-ի 2009/21/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009/16 ԵՀ հրահանգի 14-րդ հոդվածը կիրարկող՝ Հանձնաժողովի 2010թ. մայիսի 20-ի թիվ 428/2010/ԵՄ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009/16/ԵՀ հրահանգի 10(3) հոդվածը կիրարկող՝ Հանձնաժողովի 2010թ. | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սեպտեմբերի 13-ի թիվ 801/2010/ԵՄ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009/16/ԵՀ հրահանգի 10(3) և 27-րդ հոդվածները կիրարկող՝ Հանձնաժողովի 2010թ. սեպտեմբերի 13-ի թիվ 802/2010/ԵՄ կանոնակարգ,<br><br>Հանձնաժողովի 1996թ. հունիսի 25-ի 96/40/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. ապրիլի 23-ի 2009/18/ԵՀ հրահանգ և Խորհրդի 1999/35/ԵՀ փոփոխող հրահանգ և Խորհրդարանի 2002/59/ԵՀ հրահանգ,<br><br>Հանձնաժողովի 2011թ. հուլիսի 5-ի թիվ 651/2011/ԵՄ կիրարկող կանոնակարգ,<br><br>Հանձնաժողովի 2011թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1286/2011/ԵՄ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. ապրիլի 23-ի թիվ 392/2009/ԵՀ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. ապրիլի 23-ի 2009/20/ԵՀ հրահանգ, | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2006թ. փետրվարի 15-ի թիվ 336/2006/ԵՀ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. մայիսի 6-ի 2009/45/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2003թ. ապրիլի 14-ի 2003/25/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդի 1999թ. ապրիլի 29-ի 1999/35/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդի 1998թ. հունիսի 18-ի 98/41/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2002թ. հունիսի 27-ի 2002/59/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2010թ. հոկտեմբերի 20-ի 2010/65/ԵՄ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2012թ. հունիսի 13-ի թիվ 530/2012/ԵՄ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. հուլիսի 23-ի 2014/90/ԵՄ կանոնակարգ, | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2001թ. դեկտեմբերի 4-ի 2001/96/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդի 1994թ. նոյեմբերի 21-ի թիվ 2978/94/ԵՀ կանոնակարգ,<br><br>Խորհրդի 1997թ. դեկտեմբերի 11-ի 97/70/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2008թ. նոյեմբերի 19-ի 2008/106/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2005թ. սեպտեմբերի 7-ի 2005/45/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդի 1978թ. դեկտեմբերի 21-ի 79/115/ԵՏՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի թիվ 782/2003 կանոնակարգի (ԵՀ) 6(3) և<br>7-րդ հոդվածներն ուժի մեջ դնող և այդ կանոնակարգը փոփոխող՝ Հանձնաժողովի 2008թ. հունիսի 13-ի թիվ 536/2008/ԵՀ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2000թ. նոյեմբերի 27-ի 2000/59/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2005թ. սեպտեմբերի 7-ի 2005/35/ԵՀ հրահանգ, | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. հուլիսի 23-ի թիվ 911/2014/ԵՄ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2015թ. ապրիլի 29-ի 2015/757 կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2013թ. նոյեմբերի 20-ի թիվ 1257/2013/ԵՄ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2016թ. սեպտեմբերի 14-ի թիվ 2016/1625/ԵՄ կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2002թ. նոյեմբերի 5-ի թիվ 2099/2002/ԵՀ կանոնակարգ,<br><br>Խորհրդի 1992թ. մարտի 31-ի 92/29/ԵՏՀ հրահանգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 1999թ. դեկտեմբերի 13-ի 1999/95/ԵՀ հրահանգ,<br><br>Խորհրդի 1999թ. հունիսի 21-ի 1999/63/ԵՀ հրահանգ) | | | | | | |
| **39.** | Կնքել և իրականացնել «Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համապարփակ համաձայնագիրը | Կնքել «Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը և կատարել դրանից բխող գործողությունները, այդ | Շարունակական | Տարածքային կառավարման և | Համաձայնագիրը կնքված է, դրանից բխող գործողություններն իրականացվում են | ԵՄ միասնական ավիացիոն գոտուն ՀՀ միացում, ինչի արդյունքում համաձայնագրի կողմերը փոխադարձաբար կազատականացնեն շուկան՝ | Տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Համաձայնագրի հոդված 39 կետ 1) | թվում՝ օրենսդրական փոփոխություններ | | ենթակառուցվածքների նախարարություն | | ավիաընկերություններին ընձեռելով հնարավորություն առանց սահմանափակումների շահագործել երթուղիները և, հետևաբար, օգտվել ոչ խտրական, հավասար պայմաններում շուրջ 500 միլիոն բնակչություն ունեցող շուկայի սպասարկման լայն հնարավորությունից | |
| **ԳԼՈՒԽ 2 ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ** | | | | | | | |
| **40.** | Էլեկտրաէներգիայի շուկային վերաբերող կարգավորումների վերանայում<br><br>(Համաձայնագրի հոդված 42 կետ 2 (d))<br><br>2003/54/ԵՀ հրահանգին փոխարինող Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. հուլիսի 13-ի 2009/72/ԵՀ հրահանգ, 2012/27/ԵՄ հրահանգը փոփոխող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2019թ. հունիսի 5-ի 2019/944 հրահանգ) | Ընդունել «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» օրենքները | 2029 թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» օրենքներն ընդունված են | ՀՀ էլեկտրաէներգետիկայի բնագավառում մրցակցային շուկայի ստեղծում, մրցակցության խրախուսում, ոչ խտրական մուտք շուկա, համակարգերի օպերատորների տարանջատում, կարգավորողի անկախության դերի ամրապնդում, մրցակցային շուկայի զարգացմանը համընթաց կարգավորման գործիքների կատարելագործում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս<br><br>Թվինինգ |
| **41.** | Էլեկտրաէներգիայի անդրսահմանային փոխանակմանը վերաբերող կարգավորումների սահմանում<br><br>1228/2003 կանոնակարգին փոխարինող՝ Խորհրդարանի | Ընդունել «Էլեկտրաէներգետիկայի մասին» օրենքը | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքնե | «Էլեկտրաէներգետիկայի մասին» օրենքն ընդունված է | Կանոնակարգի մոտարկման արդյունքում էլեկտրաէներգիայի անդրսահմանային փոխանակման համար ցանցին միանալու պայմանների համապատասխանեցում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | և Խորհրդի 2009թ. հուլիսի 13-ի թիվ 714/2009 կանոնակարգ, Խորհրդարանի և Խորհրդի 2019թ. հունիսի 5-ի 2019/943 կանոնակարգ) | | | րի նախապարություն | | միջազգային լավագույն պրակտիկային | |
| **42.** | Էներգետիկայի բնագավառի ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի լրամշակում<br><br>(Խորհրդարանի և խորհրդի 2006թ. հունվարի 18-ի 2005/89/ԵՀ հրահանգը փոխարինող 2019թ. հունիսի 5-ի 2019/941 հրահանգ,<br><br>Խորհրդի թիվ 617/2010 կանոնակարգին փոխարինող և Խորհրդի թիվ 736/96 կանոնակարգը ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի՝ 2014թ. փետրվարի 26-ի թիվ 256/2014 կանոնակարգ,<br><br>Հանձնաժողովի 2014թ. հոկտեմբերի 16-ի թիվ 1113/2014 կիրարկող կանոնակարգ | Ընդունել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ ոլորտը կարգավորող համապատասխան որոշումներ | 2021թ. 1-ին եռամսյակ | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան որոշումներն ընդունված են | Էներգետիկայի բնագավառի ներդրումային ծրագրերի համաձայնեցման լրամշակված կարգ | Տեխնիկական աջակցություն |
| **43.** | Նավթամթերքների նվազագույն պաշարների պահպանման ազգային պարտավորությունների իրականացում | Վերանայել գործող օրենսդրությունը՝ նավթամթերքների նվազագույն պաշարների պահպանման վերաբերյալ օրենսդրության մեջ | 2027թ. 4-րդ եռամսյակ | Ներքին գործերի նախարարություն | Նավթամթերքների նվազագույն պաշարների պահպանման վերաբերյալ կարգավորումները սահմանված են | Վառելիքաէներգետիկ մատակարարման ժամանակավոր խափանումների ժամանակ ներքին առաջարկի և պահանջարկի միջև | Փորձագիտական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Խորհրդարանի 2009թ. սեպտեմբերի 14-ի 2009/119 ԵՀ հրահանգ) | կատարելով համապատասխան փոփոխություններ և սահմանելով անհրաժեշտ իրավական կարգավորումներ | | յուն | համապատասխան օրենսդրությամբ | անհամամասնության դեպքում վառելիքաէներգետիկ արտադրանքի մասով սպառողների կարիքների ապահովում, նյութական պաշարների պահպանման մասով իրավասությունների հստակ սահմանում | |
| **44.** | Էներգաարդյունավետության մասին համապարփակ կարգավորումների ներդնում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2012/27/ԵՄ հրահանգին ի կիրառումն՝ Հանձնաժողովի 2011/877/ԵՄ կիրարկող որոշմանը փոխարինող՝ Հանձնաժողովի 2015թ. հոկտեմբերի 12-ի 2015/2402 կանոնակարգ) | Իրականացնել փոփոխություններ «Էներգետիկայի մասին», «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքներում, հարակից օրենքներում և այլ իրավական ակտերում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Կսահմանվի ոլորտը համակարգող փոխվարչապետի հանձնարարությամբ | «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» օրենքներն ընդունված են | Էներգիայի սպառման կրճատման, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման, էներգետիկ անվտանգության ապահովման և սպառողների համար տնտեսական օգուտների միջոցով էներգաարդյունավետության բարձրացում | Թայեքս |
| **45.** | Էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի արտադրության արդյունավետության առնչությամբ կարգավորումների նախատեսում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2012/27/ԵՄ հրահանգին ի կիրառումն՝ Հանձնաժողովի 2011/877/ԵՄ կիրարկող որոշմանը փոխարինող՝ Հանձնաժողովի 2015թ. հոկտեմբերի 12-ի 2015/2402 կանոնակարգ) | 1. Իրականացնել փոփոխություններ «Էներգետիկայի մասին», «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքներում, հարակից օրենքներում և այլ իրավական ակտերում<br>2. Ընդունել «Ջերմամատակարարման մասին» նոր օրենք | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Էներգետիկայի մասին», «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքներում և հարակից օրենքների և այլ իրավական ակտերի փոփոխություններն ընդունված են | Էներգախնայողության ծրագրերի խրախուսում, այդ թվում՝ համակցված ցիկլով էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության կայանների կառուցմամբ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **46.** | Շենքերի էներգաարդյունավետության մասին կարգավորումների վերանայում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2010թ. մայիսի 19-ի 2010/31/ԵՄ հրահանգ) | Ընդունել համապատասխան ենթաօրենսդրական ակտ՝ կարգավորման հիմունքները սահմանելով «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Ենթաօրենսդրական ակտն ընդունված է, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքում նվազագույն կարգավորումներն առկա են | Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության նվազագույն պահանջների սահմանում | |
| **47.** | Շենքերի էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակների հաշվարկմանն ուղղված համապարփակ կարգավորումների նախատեսում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2010/31/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2012թ. հունվարի 16-ի թիվ 244/2012 կանոնակարգ, Հանձնաժողովի 2012թ. հունվարի 16-ի թիվ 244/2012 պատվիրակված կանոնակարգին կից տրվող ուղենիշներ (2012/C 115/01)) | Ընդունել հարցը շենքերի էներգաարդյունավետության ապահովման և դրա ցուցանիշների գնահատման նորմատիվ տեխնիկական փաստաթղթերը, ստանդարտները և համապատասխանության սերտիֆիկատի (էներգաարդյունավետության սերտիֆիկատի) ձևը և ձևաթղթի լրացման կանոնները սահմանող ենթաօրենսդրական ակտ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Շենքերի էներգաարդյունավետության ապահովման և դրա ցուցանիշների գնահատման նորմատիվ տեխնիկական փաստաթղթերը, ստանդարտները և համապատասխանության սերտիֆիկատի (էներգաարդյունավետության սերտիֆիկատի) ձևը և ձևաթղթի լրացման կանոնները սահմանող ենթաօրենսդրական ակտն ընդունված է | Շենքերի էներգաարդյունավետության բարելավում՝ ապահովելով ծախսաարդյունավետ լուծումներ, բարձրացնելով էներգետիկ անվտանգությունը և նպաստելով շրջակա միջավայրի պաշտպանությանը | Թայեքս |
| **48.** | Էկոլոգիապես մաքուր և էներգաարդյունավետ ավտոմոբիլային տրանսպորտի օգտագործումը | Սահմանել մաքուր տրանսպորտային միջոցների նվազագույն չափանիշները | 2029թ. 4-րդ եռամսյակ | Կսահմանվի ոլորտը համակ | Մաքուր տրանսպորտային միջոցների նվազագույն չափանիշները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ | Մաքուր և էներգախնայող տրանսպորտային միջոցների շուկայի խթանում և զարգացում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | խթանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. ապրիլի 23-ի 2009/33/ԵՀ հրահանգ) | | | արգող փոխվ արչապ ետի հանձն արարո ւթյամբ | | | |
| **49.** | Էկոդիզայնի վերաբերյալ համապարփակ կարգավորումների ապահովում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2009թ. հոկտեմբերի 21-ի թիվ 2009/125/ԵՀ հրահանգ,<br><br>Հանձնաժողովի 2009թ. հուլիսի 22-ի թիվ 641/2009 կանոնակարգ, Հանձնաժողովի 2011թ. մարտի 30-ի թիվ 327/2011 կանոնակարգ, Հանձնաժողովի 2012թ. մարտի 6-ի թիվ 206/2012 կանոնակարգ, 2012թ. հունիսի 25-ի թիվ 547/2012 կանոնակարգ, Հանձնաժողովի թիվ 278/2009 կանոնակարգին փոխարինող՝ Հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 1-ի 2019/1782 կանոնակարգ, թիվ 641/2009 կանոնակարգը փոփոխող՝ Հանձնաժողովի 2012թ. հուլիսի 11-ի թիվ 622/2012 կանոնակարգ, | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամս յակ | Տարած քային կառավ արման և ենթակ առուցվ ածքնե րի նախա րարութ յուն | «Էներգասպառող սարքավորումներին ուղղված էներգաարդյունավետության պահանջների վերաբերյալ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը հաստատվել է ԵՏՀ խորհրդի 2019 թ. օգոստոսի 8-ի N 114 որոշմամբ | Էկոդիզայնի վերաբերյալ իրավական դաշտի առկայություն | Տեխնիկ ական աջակցո ւթյուն<br><br>Թայեքս<br><br>Թվինին գ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հանձնաժողովի 2012թ. հոկտեմբերի 3-ի թիվ 932/2012 կանոնակարգ, Հանձնաժողովի 2013թ. հունիսի 26-ի թիվ 617/2013 կանոնակարգ, Հանձնաժողովի 2013թ. հուլիսի 8-ի թիվ 666/2013 կանոնակարգ, Հանձնաժողովի 2014թ. հունվարի 14-ի թիվ 66/2014 կանոնակարգ, Հանձնաժողովի 2014թ. հուլիսի 7-ի թիվ 1253/2014 կանոնակարգ) | | | | | | |
| **50.** | Կենցաղային ոչ ուղղորդված լույս արձակող լամպերի ուլտրամանուշակագույն ճառագայթման մասով էկոնախագծման պահանջների սահմանում<br><br>(թիվ 244/2009 կանոնակարգը փոփոխող՝ Հանձնաժողովի 2009թ. սեպտեմբերի 18-ի թիվ 859/2009 կանոնակարգ Հանձնաժողովի 244/2009, 245/2009 և 1194/2012 կանոնակարգերն ուժը կորցրած ճանաչող՝ Հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 1-ի 2019/2020 կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Կենցաղային ոչ ուղղորդված լույս արձակող լամպերի ուլտրամանուշակագույն ճառագայթման մասով էկոնախագծման պահանջների առկայություն | Թայեքս |
| **51.** | Հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող նոր տեսակի ջրատաքացուցիչ | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան | 2029թ. 4-րդ | Տարածքային կառավ | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող նոր տեսակի ջրատաքացուցիչ | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կաթսաներին ներկայացվող արդյունավետության պահանջների սահմանում<br><br>(Հանձնաժողովի 1992թ. մայիսի 21-ի 92/42/ԵՏՀ կանոնակարգ) | տեխնիկական կանոնակարգի համատեքստում | եռամսյակ | արման և ենթակառուցվածքների նախարարություն | | կաթսաներին ներկայացվող արդյունավետության պահանջների առկայություն | |
| **52.** | Կենցաղային ոչ ուղղորդված լամպերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Հանձնաժողովի թիվ 244/2009 կանոնակարգը,<br><br>թիվ 245/2009 կանոնակարգը փոփոխող և Խորհրդարանի և Խորհրդի 2000/55/ԵՀ հրահանգին և Հանձնաժողովի թիվ 1194/2012 կանոնակարգին փոխարինող՝ Հանձնաժողովի 2015թ. օգոստոսի 25-ի թիվ 2015/1428 կանոնակարգ,<br><br>Հանձնաժողովի թիվ 244/2009, թիվ 245/2009 և թիվ 1194/2012 կանոնակարգերն ուժը կորցրած ճանաչող՝ Հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 1-ի 2019/2020 կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Կենցաղային ոչ ուղղորդված, առանց համակցված բալաստի ֆլյուորեսցենտային լամպերի, բարձր ինտենսիվության պարպումային լամպերի և նման լամպերն աշխատացնող բալաստների ու լուսատուների, ուղղորդված լույսի լամպերի, լուսարձակող դիոդային լամպերի և նմանատիպ սարքավորումների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **53.** | Շենքի տաքացուցիչների և համակցված տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2013թ. օգոստոսի 2-ի թիվ 813/2013 կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Շենքի տաքացուցիչների և համակցված տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների առկայություն | Թայեքս |
| **54.** | Ջրատաքացուցիչների և ունակային ջրատաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2013թ. օգոստոսի 2-ի թիվ 814/2013 կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Ջրատաքացուցիչների և ունակային ջրատաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների առկայություն | Թայեքս |
| **55.** | Մասնագիտացված սառնարանային պահարանների, արագ սառեցման պահարանների, գոլորշեցուցիչների և տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Մասնագիտացված սառնարանային պահարանների, արագ սառեցման պահարանների, գոլորշեցուցիչների և տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն միջազգային ստանդարտներին | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2015թ. մայիսի 5-ի 2015/1095/ԵՄ կանոնակարգ) | | | | | | |
| **56.** | Սառնարանային տեխնիկայի էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2009թ. հուլիսի 22-ի թիվ 643/2009 կանոնակարգը փոփոխող Հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 1-ի թիվ 2019/2019/ԵՄ կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Սառնարանային տեխնիկայի էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **57.** | Պինդ վառելիքով աշխատող՝ շենքի տեղային տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2015թ. ապրիլի 24-ի 2015/1185/ԵՄ կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է ընդունվել | Պինդ վառելիքով աշխատող՝ շենքի տեղային տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **58.** | Շենքի տեղային տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Շենքի տեղային տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Խորհրդարանի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2015թ. ապրիլի 28-ի 2015/1188/ԵՄ կանոնակարգ) | կանոնակարգի համատեքստում | | ենթակառուցվածքների նախարարություն | | չափանիշներին | |
| **59.** | Պինդ վառելիքով աշխատող կաթսաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2015թ. ապրիլի 28-ի 2015/1189/ԵՄ կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Պինդ վառելիքով աշխատող կաթսաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն միջազգային լավագույն փորձին | Թայեքս |
| **60.** | Էլեկտրական և էլեկտրոնային կենցաղային և գրասենյակային սարքավորումների սպասման ու անջատված ռեժիմներում էլեկտրաէներգիայի սպառման առումով էկոնախագծման պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2008թ. դեկտեմբերի 17-ի 1275/2008 կանոնակարգ, 2009թ. փետրվարի 4-ի 107/2009 կանոնակարգը | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | փոփոխող Հանձնաժողովի 2023 թ. ապրիլի 17-ի 2023/826 կանոնակարգ, Հանձնաժողովի 2013թ. օգոստոսի 22-ի թիվ 801/2013/ԵՄ կանոնակարգ) | | | | | | |
| **61.** | Հեռուստացույցների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2009թ. հուլիսի 22-ի 642/2009 կանոնակարգը փոփոխող Հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 1-ի 2019/2021 կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Հեռուստացույցների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **62.** | Էլեկտրական շարժիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող 2014թ. հունվարի 6-ի 4/2014 կանոնակարգը փոփոխող Հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 1-ի 2019/1781 կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Էլեկտրական շարժիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **63.** | Կենցաղային լվացքի մեքենաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Կենցաղային լվացքի մեքենաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2010թ. նոյեմբերի 10-ի 1015/2010 կանոնակարգը փոփոխող Հանձնաժողովի 2019 թ. հոկտեմբերի 1-ի 2019/1781 կանոնակարգ) | կանոնակարգի համատեքստում | | և ենթակառուցվածքների նախարարություն | | չափանիշներին | |
| **64.** | Կենցաղային սպասք լվացող մեքենաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2010թ. նոյեմբերի 10-ի 1016/2010 կանոնակարգը փոփոխող Հանձնաժողովի 2019 թ. հոկտեմբերի 1-ի 2019/2022 կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Կենցաղային սպասք լվացող մեքենաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **65.** | Առանց համակցված բալաստի ֆլյուորեսցենտային լամպերի, բարձր ինտենսիվության պարպումային լամպերի և նման լամպերն աշխատացնող բալաստների ու լուսատուների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարութ | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Լամպերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Խորհրդարանի 2010 թ ապրիլի 21-ի 347/2010 կանոնակարգը Փոփոխող 2019 թ. հոկտեմբերի 1-ի 2019/2022 կանոնակարգ) | | | յուն | | | |
| **66.** | Փոքր, միջին և մեծ ուժային տրանսֆորմատորների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(2014 թ. մայիսի 21-ի 548/2014 կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Տրանսֆորմատորների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **67.** | Շենքի տաքացուցիչների, համակցված տաքացուցիչների, շենքի տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման և արևային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների, ինչպես նաև համակցված տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման և արևային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորման վերաբերյալ կարգավորումների նախատեսում | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Համալիր սարքավորումների էներգապիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013թ. փետրվարի 18-ի թիվ 811/2013/ԵՄ պատվիրակված կանոնակարգ) | | | | | | |
| **68.** | Էներգիայի պիտակավորման վերաբերյալ համապարփակ օրենսդրության ապահովում<br><br>(2010/30/ԵՄ հրահանգին փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2017թ. հուլիսի 4-ի 2017/1369 կանոնակարգը լրացնող և Հանձնաժողովի 1061/2010 կանոնակարգին և Հանձնաժողովի 96/60/ԵՀ հրահանգին փոխարինող՝ Հանձնաժողովի 2019թ. մարտի 11-ի 2019/2014/ԵՄ թիվ կանոնակարգ,<br><br>Հանձնաժողովի 2011թ. մայիսի 4-ի թիվ 626/2011 կանոնակարգ Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2010/30/ԵՄ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2012թ. մարտի 1-ի թիվ 392/2012 կանոնակարգ<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2017թ. հուլիսի 4-ի 2017/1369/ԵՄ կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է | Պիտակավորման ոլորտի իրավական դաշտի առկայություն | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **69.** | Համացանցում էներգիա սպառող արտադրանքի պիտակավորմանը վերաբերող կարգավորումների առկայություն<br><br>(Հանձնաժողովի թիվ 1059/2010, թիվ 1060/2010, թիվ 1061/2010, թիվ 1062/2010, թիվ 626/2011, թիվ 392/2012, թիվ 874/2012, թիվ 665/2013, թիվ 811/2013 և թիվ 812/2013 պատվիրակված կանոնակարգերը (ԵՄ) փոփոխող՝ Հանձնաժողովի թիվ 518/2014/ԵՄ պատվիրակված կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է | Համացանցում էներգիա սպառող արտադրանքի պիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **70.** | Ջրատաքացուցիչների, ունակային ջրատաքացուցիչների և ջրատաքացուցիչից ու արևային սարքից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորման վերաբերյալ կարգավորումների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013թ. փետրվարի 18-ի թիվ 812/2013/ԵՄ պատվիրակված կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է | Ջրատաքացուցիչների, ունակային ջրատաքացուցիչների և ջրատաքացուցիչից ու արևային սարքից բաղկացած համալիր սարքավորումների էներգապիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **71.** | Կենցաղային ջեռոցների և օդաքաշ սարքերի էներգապիտակավորման վերաբերյալ կարգավորումների նախատեսում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013թ. հոկտեմբերի 1-ի թիվ 65/2014/ԵՄ պատվիրակված կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է | Կենցաղային ջեռոցների և օդաքաշ սարքերի էներգապիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Ծայեքս |
| **72.** | Կենցաղային օդափոխիչ կայանքների էներգապիտակավորման վերաբերյալ կարգավորումների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2014թ. հուլիսի 11-ի 1254/2014/ԵՄ պատվիրակված կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է | Կենցաղային օդափոխիչ կայանքների էներգապիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Ծայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **73.** | Մասնագիտացված սառնարանային տեխնիկայի էներգապիտակավորման վերաբերյալ կարգավորումների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2015թ. մայիսի 5-ի 2015/1094/ԵՄ պատվիրակված կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է | Մասնագիտացված սառնարանային տեխնիկայի էներգապիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **74.** | Շենքի տեղային տաքացուցիչների էներգապիտակավորման վերաբերյալ կարգավորումների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2015թ. ապրիլի 24-ի 2015/1186/ԵՄ պատվիրակված կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Համապատասխան իրավական ակտն ընդունված է | Մասնագիտացված շենքի տեղային տաքացուցիչների էներգապիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **75.** | Պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգապիտակավորման վերաբերյալ կարգավորումների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքնե | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է | Պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգապիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2015թ. ապրիլի 27-ի 2015/1187/ԵՄ պատվիրակված կանոնակարգ) | | | րի նախապատրաստություն | | | |
| **76.** | Գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման վերաբերյալ կարգավորումների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2008թ. հունվարի 15-ի թիվ 106/2008 կանոնակարգ (ԵՀ), Հանձնաժողովի 2014թ. մարտի 20-ի 2014/202/ԵՄ որոշում, Հանձնաժողովի 2015թ. հուլիսի 15-ի 2015/1402/ԵՄ որոշում) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է | Գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին | Թայեքս |
| **77.** | Վառելիքի արդյունավետության և այլ կարևոր պարամետրերի առումով անվադողերի պիտակավորմանը ներկայացվող պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. նոյեմբերի 25-ի թիվ 1222/2009/ԵՀ կանոնակարգը ուժը կորցրած ճանաչող 2020թ. մայիսի 25-ի 2020/740/ԵՀ կանոնակարգ) | Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ և ԵՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում Համադրել Վառելիքի արդյունավետության և այլ կարևոր պարամետրերի առումով անվադողերի պիտակավորման վերաբերյալ դրույթները ՀՀ-ում գործող՝ ԵԱՏՄ «ՄՄ ՏԿ» 018/2011 տեխնիկական կանոնակարգով | 2026թ. 1-ին եռամսյակ<br>2029թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտն ընդունված է և վառելիքի արդյունավետության և այլ կարևոր պարամետրերի առումով անվադողերի պիտակավորման վերաբերյալ սահմանված պահանջների առկայությունն ապահովված է | 1.Վառելիքի արդյունավետության և այլ կարևոր պարամետրերի առումով անվադողերի պիտակավորմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին<br>2. Վառելիքի արդյունավետության և այլ կարևոր պարամետրերի առումով անվադողերի անվտանգության ապահովում, երթևեկության անվտանգության պահպանման առավել բարձր | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սահմանված պահանջների հետ | | | | մակարդակի ապահովում և արդյունքում նաև՝ մարդու կյանքի և առողջության պահպանում | |
| **78.** | Թաց պայմաններում C1 դասակարգի անվադողերի կցորդման փորձաստուգման վերաբերյալ կարգավորումների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի թիվ 1222/2009 կանոնակարգը/ԵՀ փոփոխող՝ Հանձնաժողովի 2011թ. մարտի 7-ի թիվ 228/2011/ԵՄ կանոնակարգ ) | 1.Ընդունել համապատասխան իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում<br>2.Ընդունել թաց պայմաններում C1 դասակարգի անվադողերի կցորդման փորձաստուգման մեթոդի մասին իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | 1. ԵԱՏՄ համապատասխան իրավական ակտում կարգավորումը արդեն ներառված է<br>2. Վառելիքի արդյունավետության և այլ կարևոր պարամետրերի առումով անվադողերի մակնշման վերաբերյալ սահմանված պահանջների առկայությունն ապահովված է | 1.Վառելիքի արդյունավետության և այլ կարևոր պարամետրերի առումով անվադողերի մակնշմանը ներկայացվող պահանջների համապատասխանություն ԵՄ չափանիշներին<br>2. Թաց պայմաններում C1 դասակարգի անվադողերի կցորդման փորձաստուգման մեթոդի առկայությամբ պայմանավորված անվադողերի անվտանգության ապահովում, երթևեկության անվտանգության պահպանման առավել բարձր մակարդակի ապահովում և արդյունքում նաև՝ մարդու կյանքի և առողջության պահպանում | |
| **79.** | Անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասակարգման, գլորման դիմադրության չափման և ստուգման ընթացակարգերի վերանայում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի թիվ 1222/2009 կանոնակարգը (ԵՀ) | Ընդունել անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասակարգման, գլորման դիմադրության չափման և ստուգման ընթացակարգի մասին իրավական ակտ՝ ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգի համատեքստում | 2029թ. 4-րդ եռամսյակ<br>2029թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | Անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասակարգման, գլորման դիմադրության չափման և ստուգման ընթացակարգի պահանջների առկայությունն ապահովված է | Անվադողերի՝ թաց պայմաններում կցորդման դասակարգման, գլորման դիմադրության չափման և ստուգման ընթացակարգի առկայությամբ պայմանավորված անվադողերի անվտանգության ապահովում, երթևեկության | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | փոփոխող՝ Հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 29-ի թիվ 1235/2011 կանոնակարգ | | | | | անվտանգության պահպանման առավել բարձր մակարդակի ապահովում և արդյունքում նաև՝ մարդու կյանքի և առողջության պահպանում | |
| **80.** | Վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ օրենսդրության մշակում, օգտագործման խթանում<br><br>(Համաձայնագրի հոդված 42 կետ 2 (d)<br><br>2001/77/ԵՀ և 2003/30/ԵՀ հրահանգներին փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. ապրիլի 23-ի 2009/28/ԵՀ հրահանգ<br><br>2018/2001 հրահանգը, 2018/1999 կանոնակարգը և 98/70/ԵՀ հրահանգը փոփոխող, Խորհրդի 2015/652 հրահանգը չեղարկող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2023թ. հոկտեմբերի 18-ի 2023/2413 հրահանգ) | Ընդունել «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» օրենք, իրականացնել վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման, էներգաարդյունավետության և էներգախնայողության խթանմանն ուղղված միջոցառումներ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» օրենքն ընդունված է, համապատասխան միջոցառումներն իրականացված են | ՀՀ օրենսդրության համապատասխանություն ԵՄ վերականգնվող էներգիայի վերջին պահանջներին, ներդրումային դաշտի կայունության նպաստում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս<br><br>Թվինինգ |
| **81.** | Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքման ստուգում և վերահսկում<br><br>(Խորհրդի 2006թ. նոյեմբերի 20-ի 2006/117 հրահանգ) | Ընդունել ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքման ստուգման և վերահսկման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներ | 2028թ 4-րդ եռամսյակ | Միջուկային անվտանգության կարգա | Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքումն ստուգելու և վերահսկելու չափանիշներն ու ընթացակարգերն ընդունված են | Բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովում շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վորման կոմիտե | | վնասակար ազդեցությունից | |
| **82.** | Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի հարաբերությունների համապարփակ կարգավորում<br><br>(Խորհրդի 2009թ. հունիսի 25-ի 2009/71/ Եվրատոմ հրահանգ) | Ընդունել «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» օրենքը | 2028թ. 4-րդ եռամսյակ | Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե | «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» օրենքն ընդունված է | Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի հարաբերությունների համապարփակ կարգավորում, բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովում, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից ՀՀ անվտանգության շահերի պաշտպանության նպատակով | |
| **83.** | Ռադիոակտիվ թափոնների կառավարման հետ կապված ընթացակարգային հարաբերությունների սահմանում<br><br>(Խորհրդի 2011թ. հուլիսի 19-ի 2011/70/Եվրատոմ հրահանգ) | Ընդունել ռադիոակտիվ թափոնների կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ կառավարության որոշումներ | 2028թ. 4-րդ եռամսյակ | Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե | Ռադիոակտիվ թափոնների կառավարման հետ կապված ընթացակարգային հարաբերությունները կարգավորող ՀՀ կառավարության որոշումներն ընդունված են | Բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովում շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **84.** | Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրում ռադիոիզոտոպների պարունակության թույլատրելի սահմանային արժեքների սահմանում և վերահսկում<br><br>(Խորհրդի 2013թ. հոկտեմբերի 22-ի 2013/51/ հրահանգ) | Ընդունել սպառման համար նախատեսված ջրում ռադիոիզոտոպների պարունակության թույլատրելի սահմանային արժեքների սահմանման և վերահսկման մասին ՀՀ կառավարության որոշում | 2028թ. 4-րդ եռամսյակ | Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե | Սպառման համար նախատեսված ջրում ռադիոիզոտոպների պարունակության թույլատրելի սահմանային արժեքների սահմանման և վերահսկման մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունված է | Բնակչության անվտանգության ապահովում իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից | |
| **85.** | Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից պաշտպանության համար անվտանգության հիմնական չափանիշների սահմանում<br><br>(Խորհրդի՝ 89/618/Եվրատոմ, 90/641/ Եվրատոմ, 96/29/Եվրատոմ, 97/43/Եվրատոմ և 2003/122/Եվրատոմ հրահանգներն ուժը կորցրած ճանաչող Խորհրդի՝ 2013թ. դեկտեմբերի 5-ի 2013/59/Եվրատոմ հրահանգ) | Ընդունել «Ճառագայթային անվտանգության և պաշտպանության պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում | 2028թ. 2-րդ եռամսյակ | Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե | Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից պաշտպանության համար անվտանգության հիմնական չափանիշներն ու սկզբունքները սահմանված են | Միջուկային և ճառագայթային անվտանգության մակարդակի բարձրացում | |
| | **ԳԼՈՒԽ 3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ** | | | | | | |
| **86.** | ՇՄԱԳ-ի ենթակա նախագծերի շրջանակի հստակեցումը, ՇՄԱԳ զեկույցի բովանդակության պահանջների սահմանումը, լիազոր մարմինների սահմանումը, թափանցիկ, իրավական երաշխավորված | Մշակել և ընդունել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը | 2021թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակված է և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. ՇՄԱԳ-ի ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն ըստ բնագավառների | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի արդյունավետության բարձրացում և շրջակա միջավայրի վիճակի բարելավում | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | և հանրության համար մատչելի գործընթացների սահմանումը՝ որոշումների կայացման, հրապարակման և բողոքարկման համար<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (a)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2011թ. դեկտեմբերի 13-ի 2011/92/ԵՄ հրահանգ) | 2. Սահմանել լիազոր մարմին և հստակեցնել լիազորությունները<br>3. Ամրագրել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում և Վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան դրույթներ | | | դասակարգվել են<br>3. ՇՄԱԳ ընթացակարգերը սահմանվել են և գործում են<br>ՇՄԱԳ-ի ենթակա նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը մշակողի (նախաձեռնողի) կողմից ներկայացվող տեղեկատվության շրջանակը սահմանվել է և կիրառվում է<br>4. Շրջակա միջավայրի հարցերով լիազոր մարմինների հետ խորհրդակցության և հանրային խորհրդակցության ընթացակարգը սահմանվել են և կիրառվում են<br>5.Ազդակիր երկրների հետ տեղեկատվության փոխանակման և խորհրդակցությունների ընթացակարգերը սահմանվել են<br>6.ՇՄԱԳ և փորձաքննության արդյունքների վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու միջոցները սահմանվել են և կիրառվում են<br>7. Հանրության և ՀԿ-ների մասնակցությամբ վարչական և դատական մակարդակներում վերանայման ընթացակարգերի վերաբերյալ իրավական կարգավորումները սահմանված են | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **87.** | ՌԷԳ լիազոր մարմնի, գնահատման ենթակա պլանների ու ծրագրերի, տեղեկատվության փոխանակման համապատասխան ընթացակարգերի սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (a)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2001թ. հունիսի 27-ի 2001/42/ԵՀ հրահանգ) | 1. Մշակել և ընդունել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը և դրանից բխող ՌԷԳ ընթացակարգերը սահմանող իրավական ակտը<br>2. Սահմանել լիազոր մարմին և հստակեցնել լիազորությունները | 2022թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Ռազմավարական էկոլոգիական գնահատման ընթացակարգերը սահմանված են և կիրառվում են<br>3. ՌԷԳ շրջանակներում շրջակա միջավայրի համար պատասխանատու լիազոր մարմինների և հանրության հետ խորհրդակցությունների անցկացման ընթացակարգերը սահմանվել են և կիրառվում են<br>4. Ազդակիր երկրների հետ տեղեկատվության փոխանակման և խորհրդակցությունների ընթացակարգերը սահմանված են | ՌԷԳ (ռազմավարական էկոլոգիական գնահատում) գործիքի պատշաճ կիրառման արդյունքում բնապահպանական, սոցիալ-տնտեսական և առողջապահական նկատառումների ինտեգրում ոլորտային ռազմավարական փաստաթղթերում՝ տնտեսական զարգացման երկարաժամկետ կայունության ապահովման, ինչպես նաև պոտենցիալ բնապահպանական ռիսկերի և անորոշությունների վաղ հայտնաբերում և երկարաժամկետ օգուտների ստացում | Թայեքս |
| **88.** | Բնապահպանական տեղեկատվության մատչելիության ապահովման ընթացակարգերի սահմանում, բացառությունների կիրառման և տեղեկատվություն չտրամադրելու որոշումների վերանայման հստակ ընթացակարգերի սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (a) | 1. Ուսումնասիրել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենք և անհրաժեշտության դեպքում ընդունել փոփոխությունների նախագիծը<br>2. Սահմանել տեղեկատվության տարածման համակարգերի, մեխանիզմների, հասարակական | 2021թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և բացառությունների վերաբերյալ իրավական դրույթներն ընդունվել են և գործում են<br>3. Պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի | Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության և մատչելիության ապահովում | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և խորհրդի 2003թ. հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգ) | կազմակերպություններին և ԶԼՄ-երին տեղեկատվության տրամադրումը և փոխանակման մեխանիզմները | | | վերաբերյալ տեղեկատվությունը հանրությանը հասանելի դարձնելու իրավական հիմքերն ընդունվել են և գործում են<br>4. Ընդունվել են իրավական ընթացակարգեր՝ այն որոշումների վերանայման համար, որոնցով շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը ամբողջությամբ չի տրամադրվում կամ տրամադրվում է միայն մասնակիորեն<br>5. Ընդունվել և գործում են իրավական դրույթներ, որոնք սահմանում են հանրությանը շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համակարգի ստեղծումը, կազմվել և հրապարակվել է շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ զեկույց | | |
| **89.** | Հանրային մասնակցության և տեղեկատվության տրամադրման մեխանիզմների սահմանում՝ որոշումների կայացման գործընթացում կարծիքների ներառման ապահովմամբ: Իրավական և գործնական հիմքերի ստեղծում՝ հանրության, ներառյալ ՀԿ- | 1. Ընդունել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերը | 2021թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>ՇՄԱԳ շրջանակներում որոշումների արդյունքների վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու միջոցները, հանրային քննարկումների անցկացման | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի արդյունավետության բարձրացում | Թայեքս<br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ների, վարչական և դատական կարգով արդարադատության հասանելիության համար<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (a)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2003թ. մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգ) | 2. Սահմանել լիազոր մարմին և հստակեցնել լիազորությունները<br>3. Ամրագրել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում և Վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան դրույթներ | | | ընթացակարգերը սահմանվել են և կիրառվում են<br>Արդարադատության մատչելիության ապահովման մեխանիզմները գործում են | | |
| **90.** | Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) և շրջակա միջավայրին հասցված վնասի դեպքում ազդեցություն կրած անձանց կողմից իրավասու մարմիններին դիմելու մեխանիզմների (ներառյալ անկախ վերանայման) սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (a))<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2004թ. ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգ | Ընդունել «Բնապահպանական պատասխանատվության մասին» նոր օրենքը | 2024թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինները նշանակվել և գործում են իր իրավասության շրջանակներում<br>2. Շրջակա միջավայրին հասցված վնասի արդյունքում վնաս կրած անձանց կողմից իրավասու մարմիններին դիմելու մեխանիզմները սահմանվել են և կիրառվում են | Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելում, նվազեցում և բացառում. | Թայեքս |
| **91.** | «Աղտոտողը վճարում է» սկզբունքի հիման վրա շրջակա միջավայրին (ջուր, հող, պահպանվող տեսակներ և բնական միջավայրեր) հասցված վնասը կանխելուն և | Ընդունել «Բնապահպանական պատասխանատվության մասին» նոր օրենքը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարութ | Շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելման և վերացման վերաբերյալ օրենսդրությունն ընդունված և կիրառվում է | Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելում, նվազեցում և բացառում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վերացնելուն ուղղված կանոնների և ընթացակարգերի սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (a)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2004թ. ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգ) | | | յուն | | | |
| **92.** | Գործունեության վտանգավոր տեսակների համար խիստ պատասխանատվության սահմանում և օպերատորների համար անհրաժեշտ կանխարգելիչ և վերականգնող միջոցներ ձեռնարկելու պարտավորությունների ներառյալ ծախսերի վճարման պատասխանատվության սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (a)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2004թ. ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգ) | Ընդունել «Բնապահպանական պատասխանատվության մասին» նոր օրենքը | 2026թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Գործունեության վտանգավոր տեսակների համար սահմանված է խիստ պատասխանատվություն՝ շրջակա միջավայրին հասցված վնասի համար<br>2. Շրջակա միջավայրին հասցված վնասի համար սահմանվել են կանխարգելիչ և վերականգնող միջոցներ ձեռնարկելու պարտավորություններ՝ ներառյալ ծախսերի վճարման պատասխանատվության մասով | Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելում, նվազեցում և բացառում | Թայեքս |
| **93.** | Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում<br><br>Գոտիների և ագլոմերացիաների | 1. Ընդունել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենք<br>2. Ընդունել «Գոտիների և ագլոմերացիաների | 2027թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2.Դասակարգվել են գոտիներ և ագլոմերացիաներ՝ ըստ օդն | Մթնոլորտային օդի որակի բարելավում,սահմանված շեմերի գերազանցումների դեպքում իրականացվող նախազգուշական և կանխարգելիչ | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սահմանում և դասակարգում<br><br>Օդն աղտոտող նյութերի մասով մթնոլորտային օդի որակի գնահատման համակարգի, օդի որակի պահպանության պլանների, կարճաժամկետ գործողությունների ծրագրերի սահմանում<br><br>Հանրությանը տեղեկատվության տրամադրման համակարգի ստեղծում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (b)<br><br>(Խորհրդարանի և խորհրդի 2008թ. մայիսի 21-ի 2008/50/ԵՀ հրահանգ) | դասակարգման մասին» ՀՀ կառավարության որոշում<br>3. Ընդունել «Մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում<br>4. Ընդունել «Օդի որակի պլանների և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի մշակման ուղեցույցները հաստատելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրաման<br>5. Ընդունել «Մթնոլորտային օդի պետական մոնիթորինգի իրականացման, ստացված տվյալների հավաքման, վերլուծության, գնահատման և տեղեկատվության տրամադրման կարգը և մոնիթորինգի ցուցանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում | | | աղտոտող նյութերի գնահատման շեմերի<br>3. Օդի որակի գնահատման չափանիշները՝ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների, կրիտիկական մակարդակների, գնահատման վերին և ստորին շեմերի, զգուշացման շեմերի, տեղեկացման շեմերի արժեքները սահմանվել են<br>4. Օդի որակի պահպանության պլանների մշակման ուղեցույցները հաստավել են<br>5. Գոտիներում և ագլոմերացիայում օդի որակի պլանների և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման լիազորությունների սահմանում<br>6. Վերլուծության և գնահատման արդյունքում ստացված տեղեկատվության հանրայնացման, հրապարակման և տրամադրման ընթացակարգերը գործում են, որի արդյունքում վերահսկելի և կիրառելի կդառնան մթնոլորտային օդի որակի վերաբերյալ տեղեկատվության հանրայնացման և միջազգային հարթակներում | միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հրապարակման գործընթացները | | |
| **94.** | Մթնոլորտային օդի որակի պահպանության ոլորտում ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում<br><br>Գնահատման վերին և ստորին շեմերի և նպատակային արժեքների սահմանում, գոտիների և ագլոմերացիաների սահմանում և դասակարգում<br><br>Օդն աղտոտող նյութերի մասով մթնոլորտային օդի որակի գնահատման համակարգի սահմանում Համապատասխան աղտոտող նյութերի մասով օդի որակը պահպանելուն/բարելավելուն ուղղված միջոցառումների ձեռնարկում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2004թ. դեկտեմբերի 15-ի 2004/107/ԵՀ հրահանգ) | 1. Ընդունել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը<br>2. Ընդունել «Մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը<br>3. Ընդունել «Գոտիների և ագլոմերացիաների դասակարգման մասին» ՀՀ կառավարության որոշումը<br>4.Ընդունել «Օդի որակի պլանների և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի մշակման ուղեցույցները հաստատելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել է և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Օդի որակի գնահատման չափանիշները՝ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների, կրիտիկական մակարդակների, գնահատման վերին և ստորին շեմերի, զգուշացման շեմերի, տեղեկացման շեմերի արժեքները սահմանվել են<br>3. Ըստ օդն աղտոտող նյութերի գնահատման շեմերի՝ գոտիները և ագլոմերացիաները դասակարգվել են<br>4. Օդի որակի պահպանության պլանների մշակման ուղեցույցները հաստավել են<br>5. Գոտիներում և ագլոմերացիայում օդի որակի պլանների և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման լիազորությունների սահմանում | Մթնոլորտային օդի որակի բարելավում | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **95.** | Հեղուկ վառելանյութերում ծծմբի պարունակության կրճատման վերաբերյալ | 1. Վերանայել գործող օրենսդրությունը ըստ | 2021թ. 4-րդ | Շրջակա միջավ | 1. Լիազոր մարմինը նշանակվել է և գործում է իր | Մթնոլորտային օդի որակի բարելավում | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ազգային օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի/ների նշանակում, վառելիքի նմուշառման արդյունավետ համակարգի և ծծմբի պարունակությունը որոշելու համար վերլուծության համապատասխան վերլուծական մեթոդների ստեղծում, մազութի և նավթաթորվածքի (գազային յուղի) օգտագործման արգելքի սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (b)<br><br>1999/32/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2016թ. մայիսի 11-ի 2016/802/ԵՀ հրահանգ) | անհրաժեշտության և սահմանել լիազոր մարմին<br>2. Մշակել և ընդունել վառելիքի նմուշառման արդյունավետ համակարգի և ծծմբի պարունակության որոշմանն ուղղված վերլուծության համապատասխան անալիտիկ մեթոդները սահմանող իրավական ակտի նախագիծը<br>3. Ընդունել մազութի և նավթաթորվածքի (գազային յուղի) օգտագործման արգելքը սահմանող իրավական ակտի նախագիծը | եռամսյակ | այրի նախարարություն | իրավասության շրջանակներում<br>2. Վառելիքի արդյունավետ նմուշառման համակարգի և ծծմբի պարունակությունը որոշելու վերլուծական մեթոդները ստեղծվել են<br>3. Մազութի և նավթաթորվածքի օգտագործման արգելքը սահմանվել և գործում է | | Ծփինինգ |
| **96.** | Մթնոլորտային օդի որակի մակարդակի բարելավում<br><br>Համաձայնագրի հոդված 46 (b))<br><br>(Խորհրդարանի և խորհրդի 1994թ. դեկտեմբերի 20-ի 94/63/ԵՀ հրահանգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 3-րդ հոդվածներին և հավելվածին ազգային օրենսդրության մոտարկում) | 1. Վերանայել գործող օրենսդրությունը ըստ անհրաժեշտության և սահմանել լիազոր մարմին<br>2. Հայտնաբերել բենզինի պահման և բեռնափոխման բոլոր կայանները<br>3. Սահմանել բենզինի կորստի կրճատմանն ուղղված տեխնիկական և ավտոցիստեռների բեռնման կամրջակների և շարժական կոնտեյներների | 2027թ. 4-րդ եռամսյակ | Կսահմանվի ոլորտը համակարգող փոխվարչապետի հանձնարարությամբ | 1. Լիազոր մարմինը նշանակվել է և գործում է իր իրավասության սահմաններում<br>2. Բենզինի պահման և բեռնափոխման բոլոր կայանների բազան ստեղծվել է<br>3. Բենզինի կորստի կրճատմանն ուղղված տեխնիկական պահանջները և ավտոցիստեռների բեռնման կամրջակների և շարժական կոնտեյներների | Մթնոլորտային օդի որակի բարելավում | Ծայեքս<br><br>Ծփինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | համապատասխանության պահանջները | | | համապատասխանության պահանջները սահմանված են և կիրառվում են | | |
| **97.** | Որոշակի ներկերում, լաքերում և փոխադրամիջոցների երեսմշակման ապրանքներում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (b)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2004 թ. ապրիլի 21-ի 2004/42/ԵՀ հրահանգ) | 1. Ըստ անհրաժեշտության վերանայել գործող օրենսդրությունը և սահմանել լիազոր մարմին<br>2. Մշակել և ընդունել n րոշակի ներկերում, լաքերում և փոխադրամիջոցների երեսմշակման ապրանքներում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին իրավական ակտ<br>3. Մշակել և ընդունել Շուկայահանված ապրանքների պիտակավորումը և համապատասխան պահանջներին համապատասխանող ապրանքների շուկայահանումն ապահովող պահանջները սահմանող իրավական ակտ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | 1.<br>Որոշակի ներկերում, լաքերում և փոխադրամիջոցների երեսմշակման ապրանքներում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակումները կիրառվում են<br>2. Շուկայահանված ապրանքների պիտակավորումը և համապատասխան պահանջներին համապատասխանող ապրանքների շուկայահանումն ապահովող պահանջները կիրառվում են | Մթնոլորտային օդի որակի բարելավում | |
| **98.** | Լիազոր մարմնի սահմանում, գետավազանային տարածքների բացահայտում, բնութագրիչների վերլուծություն, ջրի որակի մոնիտորինգի ծրագրերի և | 1. Վերանայել և հաստատել ջրային օրենսդրությունը<br>2. Սահմանել գետավազանային տարածքներ վերլուծել | 2024թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարութ | 1. Ազգային օրենսդրությունն ընդունվել է<br>2. Լիազորված մարմինը նշանակվել է<br>3. Գետավազանային տարածքները սահմանվել են | Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման կայացում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գետավազանային կառավարման պլանների և մշակում՝ ապահովելով հանրության մասնակցությունն ու պլանների հրապարակայնությունը:<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (c)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2000թ. հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգ) | գետերի ավազանների բնութագրիչները<br>3. Ուսումնասիրել մակերևութային և ստորերկրյա ջրերի վիճակի վրա մարդածին գործունեության ազդեցությունը<br>4. Կատարել ջրօգտագործման տնտեսական վերլուծություն հրահանգի 5-րդ հավելվածում սահմանված պահանջների՝ ջրավազանային կառավարման տարածքների պլանի կիրառման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար մակերևութային և ստորերկրյա ջրերի համար վերահսկողական և գործառնական դիտանցման ծրագրի ստեղծում<br>5. Վեց ջրավազանային տարածքների համար կառավարման պլանների վերանայում և հաստատում | | յուն | 4. Հաստատվել են ջրավազանային կառավարման տարածքների վեց պլաններ<br>5. Հաստատվել են ջրավազանային կառավարման տարածքների վեց պլանների հիման վրա կազմված ջրերի մոնիթորինգի ծրագրեր | | |
| **99.** | Լիազոր մարմինների սահմանում, հեղեղումների ռիսկերի նախնական գնահատում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների մշակում | 1. Վերանայել գործող օրենսդրությունը, սահմանել լիազոր մարմին<br>2. Գնահատել հեղեղումների ռիսկի կառավարման պլանների շրջանակներում յուրաքանչյուր գետի ավազանի տարածքի կամ ռիսկերի կառավարման | 2024թ. 4-րդ եռամսյակ | ՏԿԵՆ Ջրային կոմիտե | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Հաստատվել են հեղեղումների ռիսկի կառավարման պլաններ | Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման լիարժեք կայացում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Համաձայնագրի հոդված 46 (c)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2007թ. հոկտեմբերի 23-ի 2007/60/ԵՀ հրահանգ) | միավորի համար հեղեղումների նախնական ռիսկը և որոշել հավանական էական նշանակություն ունեցող հեղեղումների ռիսկերի գոտիները<br>3. Հիմնվելով հեղեղումների ռիսկի նախնական գնահատման, հավանական էական նշանակություն ունեցող հեղեղումների ռիսկերի տարանջատված գոտիների, ինչպես նաև հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների հիման վրա՝ կազմել հեղեղումների ռիսկի կառավարման պլանները | | | | | |
| **100.** | Ներպետական օրենսդրության ընդունում, իրավասու մարմնի (իրավասու մարմինների), աղտոտված կամ վտանգված ջրերի հայտնաբերում և նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների, դիտանցման ծրագրերի սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (c)<br><br>Խորհրդի 1991թ. մայիսի 21-ի 91/676/ԵՏՀ հրահանգ) | 1. Վերանայել գործող օրենսդրությունը սահմանել լիազոր մարմին<br>2. Հայտնաբերել ջրավազանային կառավարման տարածքների պլաններում նիտրատներով աղտոտված կամ վտանգված ջրերը և սահմանել նիտրատների նկատմամբ զգայուն գոտիներ<br>3. Սահմանել նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների դիտանցման ծրագրեր | 2024թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Հաստատվել են ջրավազանային կառավարման տարածքների վեց պլաններ<br>3. Նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների դիտանցման իրականացումը սահմանվել է | Գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պաշտպանություն | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **101.** | Պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի | Պատշաճ Գյուղատնտեսական | 2027թ. 4-րդ | Էկոնոմիկայի | Հաստատվել են պատշաճ գյուղատնտեսական | Գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գործողությունների ծրագրերի և կանոնների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (c)<br><br>Խորհրդի 1991թ. մայիսի 21-ի 91/676/ԵՏՀ հրահանգ (հոդված 4 և հոդված 5)) | գործելակերպի գործողությունների ծրագրերը սահմանող իրավական ակտի մշակում | եռամսյակ | նախապարություն | գործելակերպի գործողությունների ծրագրերը | նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պաշտպանություն | Թվինինգ |
| **102.** | «Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (c)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2008թ. նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգ) | Մշակել և ընդունել «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենքը | 2025թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախապարություն | «Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմը մշակվել և կիրառվում է | Դեպի աղբավայրեր տեղափոխվող հատուկ թափոնների ծավալների կրճատում, հատուկ թափոնների օգտահանման և վերամշակման ծավալների ավելացում, սակավաթափոն տեխնոլոգիաների կիրառում, շրջակա միջավայրի վիճակի բարելավում | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **103.** | Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում<br><br>Օպերատորների կողմից թափոնների կառավարման պլանների մշակումն ապահովող համակարգի ստեղծում (թափոնների գործածության օբյեկտների | 1. Սահմանել լիազոր մարմին<br>2. Ստեղծել թափոնների կառավարման պլանների մշակումն ապահովող համակարգ<br>3. Ստեղծել թույլտվությունների, ֆինանսական երաշխիքների և տեսչական համակարգ<br>4. Մշակել ընդերքօգտագործման | 2027թ.. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախապարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Թափոնների կառավարման պլանների մշակումն ապահովող համակարգը ստեղծվել և գործում է<br>3. Թույլտվությունների, ֆինանսական երաշխիքների | Ընդերքօգտագործման հետևանքով թափոնների կայուն կառավարում և շրջակա միջավայրի վիճակի բարելավում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | որոշում և դասակարգում. թափոնների բնութագրում)<br><br>Թույլտվությունների, ֆինանսական երաշխիքների և տեսչական համակարգի ստեղծում<br>Հանման հետևանքով առաջացած ստորերկրյա խոռոչների կառավարման և դիտանցման ընթացակարգերի սահմանում<br>Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության օբյեկտների փակման և փակմանը հաջորդող փուլերի ընթացակարգերի սահմանում և փակված օբյեկտների ցանկի կազմում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (d)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2006թ. մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգ) | թափոնների օբյեկտների ստորերկրյա խոռոչների կառավարման և դիտանցման ընթացակարգերը սահմանող իրավական ակտի նախագիծ<br>5. Սահմանել լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության օբյեկտների փակման և փակմանը հաջորդող փուլերի ընթացակարգեր<br>6. Կազմել լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության փակված օբյեկտների ցանկ | | | և տեսչական համակարգը ստեղծվել և գործում է<br>4. Ընդունված ազգային օրենսդրություն կամ իրավական կարգավորումներ, որոնք սահմանում են ստորերկրյա խոռոչների կառավարման և դիտանցման ընթացակարգերը մշակվել են<br>5. Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության օբյեկտների փակման և փակմանը հաջորդող փուլերի ընթացակարգերը սահմանված են և գործում են<br>6. Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության փակված օբյեկտների ցանկը կազմվել է | | |
| **104.** | Ներպետական օրենսդրության ընդունում և լիազոր մարմնի (մարմինների) սահմանում,<br>Վայրի թռչունների, այդ թվում՝ միգրացվող տեսակների պահպանության հատուկ միջոցների սահմանում, հատուկ պահպանման | 1. Ընդունել համապատասխան ազգային օրենսդրություն և սահմանել լիազոր մարմին<br>2. Իրականացնել վայրի թռչունների հատուկ պահպանման միջոցառումներ և գնահատել միգրացվող տեսակներ | 2023թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Պահպանության հատուկ միջոցներ պահանջող թռչունների միգրացվող տեսակները գնահատվել են<br>3. Ջրային թռչունների տեսակների համար հատուկ | Կենսաբազմազանության պահպանություն և վերականգնում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տարածքների որոշում և սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (e)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. նոյեմբերի 30-ի 2009/147/ԵՀ հրահանգ) | 3. Նշանակել տեղամասեր, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ AEWA-ի կողմից ընդգրկված ջրային թռչունների համար<br>4. Հիմնել միգրացվող թռչունների տեսակների պահպանության համար հատուկ պահպանության միջոցառումներ | | | պահպանության սահմանված տարածքների ցանկը հաստատվել է<br>4. Միգրացվող թռչունների տեսակները պաշտպանելու համար պահպանության հատուկ միջոցների սահմանվել են և կիրառվում են | | |
| **105.** | Վայրի թռչունների բոլոր տեսակների պահպանության ընդհանուր համակարգի ստեղծում՝ այդ թվում որսի ենթակա տեսակների և որսի ոչ ենթակա տեսակների<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (e)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. նոյեմբերի 30-ի 2009/147/ԵՀ հրահանգ) | Հիմնել վայրի թռչունների բոլոր տեսակների պահպանության համար ընդհանուր համակարգ | 2024թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | Բոլոր վայրի թռչունների տեսակների համար ընդհանուր պաշտպանության համակարգը հաստատվել է | Կենսաբազմազանության պահպանություն և վերականգնում | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **106.** | Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի սահմանում, տարածքների ցանկի կազմում, սահմանում և դրանց կառավարման գերակայությունների, անհրաժեշտ միջոցառումների, ներառյալ՝ համաֆինանսավորում, որոշում, ինչպես նաև կրթության խթանման և հասարակայնությանը | 1. Սահմանել լիազոր մարմին<br>2. Ընդունել բնության հատուկ պահպանվող տարածքների մասին նոր օրենք (արժեքավոր էկոհամակարգերի ներառյալ «Էմերալդ ցանցի» տարածքների ձևավորման օրենսդրական հիմքերի հաստատում)<br>3. Կազմել տարածքների ցանկ, սահմանել և որոշել | 2025 թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում «Էմերալդ ցանցի» տարածքների սահմանված ցանկը ստեղծվել է<br>2. Տարածքների ցանկը և դրանց կառավարման գերակայությունները սահմանվել են<br>3. Պահպանության ենթակա բոլոր տարածքների | Պահպանության ենթակա տարածքների արդյունավետ պահպանություն և կայուն կառավարում | Թայեքս Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տեղեկատվության տարածման մեխանիզմների հիմնում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (e)<br><br>Խորհրդի 1992թ. մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգ) | դրանց կառավարման գերակայություններ<br>4. Կազմել տարածքների կառավարման պլաններ, ապահովել հաշվետվողականություն<br>5. Մշակել «Էմերալդ ցանցի» ի հաստատմանն ու զարգացմանն ուղղված ազգային գործողությունների ծրագիր (2023-2030թթ.)<br>6. Կատարել ԲՀՊՏ ՊՈԱԿ-ների կանոնադրական իրավունքի շրջանակներում պարբերաբար գիտակրթական և հանրային իրազեկման աշխատանքներ | | | կառավարման պլանները հաստատվել են<br>«Էմերալդ ցանցի» հաստատմանն ու զարգացմանն ուղղված ազգային գործողությունների ծրագիրը մշակվել է<br>4. Կրթության խթանման և հասարակայնությանը տեղեկատվության տարածման գործող համակարգը ստեղծվել է | | |
| **107.** | Բնակմիջավայրերի և տեսակների պահպանության կարգավիճակի մոնիթորինգի համակարգի հիմնում 92/43/ԵՏՀ հրահանգի Հավելված IV-ում ներառված տեսակների համար պահպանության խիստ ռեժիմի հիմնում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (e)<br><br>Խորհրդի 1992թ. մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգ) | 1. Իրականացնել բնակմիջավայրերի և տեսակների պահպանության կարգավիճակի մոնիթորինգ<br>2. Իրականացնել կենդանիների սպանության և վայրի բնությունից ապօրինի վերցման դեպքերի մոնիթորինգ | 2026թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Բնակմիջավայրերի և տեսակների պահպանության կարգավիճակի մոնիթորինգի գործող համակարգը ստեղծված է<br>2. Կենդանիների սպանության և վայրի բնությունից ապօրինի վերցման դեպքերի մոնիտորինգի համակարգը ստեղծված է | Բնակմիջավայրերի և տեսակների պահպանության բարելավում և կայուն կառավարում | Ծայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **108.** | Արդյունաբերական արտանետումների մասին (աղտոտման միասնական կանխում և վերահսկում)<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (f)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2010թ. նոյեմբերի 24-ի 2010/75/ԵՀ հրահանգի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 12-րդ, 14(1)(դ)-րդ, 14(3)-(6), 15(2)-(4), 21-րդ, 23(1)-րդ, 24-րդ, հոդվածներին և 1-ին և 4-րդ հավելվածներին ազգային օրենսդրության մոտարկում՝ մթնոլորտային օդի կառավարման ոլորտում) | 1. Ընդունել արդյունաբերական արտանետումների վերաբերյալ համապատասխան օրենսդրություն<br>2. Իրականացնել «Լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրմանն ենթակա ոլորտների և ենթաոլորտների տեղայնացնում ազգային օրենսդրության մեջ<br>3. Ստեղծել թույլտվությունների համակցված համակարգ և մշակել մեխանիզմներ առավել խոշոր արտանետողների համար<br>4. Մշակել և ներդնել արդյունաբերական աղբյուրների համար համակարգ<br>5. Մշակել և ընդունել դիտանցման կարգը սահմանող ենթաօրենսդրական ակտի նախագծի և դիտանցման իրականացման միջոցառումների ծրագիր<br>6. Կիրառել լավագույն հասանելի տեխնոլոգիաներ՝ հաշվի առնելով լավագույն հասանելի տեխնոլոգիաների համար ԵՄ ելակետային փաստաթղթերը և դրանց տեղայնացումը ազգային | 2027թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Արդյունաբերական արտանետումների մասին համապատասխան իրավական ակտն ընդունվել է<br>2. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>3. Իրավական ակտով հաստատվել են «Լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրմանն ենթակա տնտեսական գործունեության ոլորտներ<br>4. Թույլտվությունների համակցված համակարգի ընթացակարգը սահմանվել և կիրառվում է<br>5. Գործող մեխանիզմը, որը հնարավոր կդարձնի ստուգել թույլտվության պայմանների պահպանումը և համեմատություն կատարել լավագույն հասանելի տեխնոլոգիայի հետ կապված արտանետումների մակարդակների հետ ստեղծվել է<br>6. Լավագույն հասանելի տեխնոլոգիաների համար տեղայնացված եզրակացությունները կիրառվել են<br>7. Այրման կայանների համար արտանետումների սահմանված արժեքներն ընդունվել են | Արդյունաբերական արտանետումների կրճատում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | օրենսդրության և ինստիտուցիոնալ շրջանակում<br>7. Մշակել և ընդունել այրման կայանների համար արտանետումների սահմանային արժեքները սահմանող իրավական ակտի նախագիծ<br>8. Մշակել և իրականացնել գոյություն ունեցող կայաններից տարեկան արտանետումների ընդհանուր ծավալի կրճատմանն ուղղված միջոցառումների ծրագիր՝ այլընտրանքային և նորագույն տեխնոլոգիաների կիրառման հիման վրա | | | 8. Հաստատվել է միջոցառումների ծրագիր՝ գոյություն ունեցող կայաններից տարեկան արտանետումների ընդհանուր ծավալի կրճատման համար (գոյություն ունեցող կայանների արտանետումների սահմանային արժեքների սահմանման այլընտրանք) | | |
| **109.** | Հրահանգով սահմանված վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման մասին ծանուցման ընթացակարգերի և դրանց ապահովման համար պատասխանատու ներպետական մարմինների սահմանում, արտահանման և ներմուծման նկատմամբ հսկողություն իրականացնող ներպետական մարմինների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (գ) | Մշակել քիմիական նյութերի կառավարման օրենսդրություն | 2027թ. 4-րդ եռամսյակ | Կսահմանվի ոլորտը համակարգող փոխվարչապետի հանձնարարությամբ | 1. Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման համար ընթացակարգերը սահմանվել և կիրառվում են<br>2. Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման ծանուցման, նախնական հիմնավորված համաձայնության և վերջնական կարգավորիչ գործողության ընթացակարգերը սահմանված են և կիրառվում են | Քիմիական նյութերի կայուն կառավարում, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության կանխարգելում կամ նվազեցում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և խորհրդի 2012թ. 24-ի 649/2012/ԵՀ հրահանգ) | | | | | | |
| **110.** | Արտահանվող վտանգավոր քիմիական նյութերի պիտակավորման և փաթեթավորման պահանջների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (գ)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2012թ. հուլիսի 24-ի 649/2012/ԵՀ հրահանգ (հոդվածներ 17)) | Մշակել քիմիական նյութերի կառավարման օրենսդրություն | 2027թ. 4-րդ եռամսյակ | Կսահմանվի ոլորտը համակարգող փոխվարչապետի հանձնարարությամբ | Արտահանվող վտանգավոր քիմիական նյութերի պիտակավորման և փաթեթավորման պահանջները սահմանվել և կիրառվում են | Քիմիական նյութերի կայուն կառավարում, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության կանխարգելում կամ նվազեցում | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **111.** | Քիմիական նյութերի կառավարման ոլորտի իրավասու մարմինների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 (գ)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2008թ. դեկտեմբերի 16-ի 1272/2008/ԵՀ հրահանգ) | 1. Մշակել քիմիական նյութերի կառավարման օրենսդրություն<br>2. Սահմանել լիազոր մարմին | 2027թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում | Քիմիական նյութերի կայուն կառավարում | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **112.** | Քաղաքային կեղտաջրերի մաքրման վերաբերյալ Գործող օրենսդրության վերանայում և լիազոր մարմնի սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 46 կետ (c) | 1.Սահմանել լիազոր մարմին/մարմինների<br>2.Կատարել օրենսդրական փոփոխություններ/ վերանայել գործող օրենսդրությունը | 2026թ. 1-ին եռամսյակ | ՏԿԵՆ ջրային կոմիտե | 1.Քաղաքային կեղտաջրերի մաքրման վերաբերյալ օրենսդրական նոր փոփոխություններ, և/կամ 2.վերանայվել է գործող օրենսդրությունը | 1.Լիազոր մարմին/մարմինների սահմանում<br>2.Օրենսդրական փոփոխություններ | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդի 1991թ. մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգ քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին | | | | | | |
| 113. | Քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման իրավիճակի գնահատում, զգայուն ոլորտների և ագլոմերացիաների որոշում<br><br>(Խորհրդի 1991թ. մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգ (հոդված 5 (1) և հավելված 2) | Զգայուն ոլորտների և ագլոմերացիաների սահմանում՝ հաշվի առնելով քաղաքային կեղտաջրերի իրավիճակի գնահատականը | 2026թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 1.Քաղաքային կեղտաջրերի ամբողջական գնահատված իրավիճակ<br>2.Սահմանված զգայուն ոլորտներ և ագլոմերացիաներ | Սահմանված ագլոմերացիաներ՝ հիմք ընդունելով կեղտաջրերի իրավիճակի գնահատման արդյունքները | Թայեքս<br><br>Թվինինգ |
| 114. | Քաղաքային կեղտաջրերի մաքրման պահանջների իրականացման համար տեխնիկական և ներդրումային ծրագրի կազմում<br><br>(Խորհրդի 1991թ. մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգ (հոդված 17)) | Տեխնիկական և ներդրումային ծրագրերի կազմում | 2027թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Մշակված տեխնիկական և ներդրումային ծրագրերի փաթեթներ | 1.Տեխնիկական և ներդրումային ծրագրերի իրականացում<br>2.Քաղաքային կեղտաջրերի կառավարում և բարելավված իրավիճակի ապահովում | Թայեքս<br><br>Թվինինգ |
| | **ԳԼՈՒԽ 4 ԿԼԻՄԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | | | | | | |
| 115. | Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների կատարման գործողությունների ծրագրի մշակում, համապատասխան | 1. Մշակել փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների կատարման գործողությունների ծրագիր | 2029 թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախա | 1. Ջերմոցային գազերի նույնականացման գործող համակարգը ստեղծվել է<br>2. Սահմանվել է կլիմայական օրենսդրության պահանջների | Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում և երկրի հաշվետվողականության | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կառուցվածքների և ջերմոցային գազերի նույնականացման համակարգի ստեղծում, ջերմոցային գազերի (ներառյալ ավիացիոն արտանետումների) դիտանցման, հաշվետվություններ ներկայացնելու, ստուգման և կատարման համակարգերի և հանրային քննարկումների ընթացակարգերի սահմանում<br><br>Ջերմոցային գազերի մարդածին արտանետումների ազգային կադաստրների և ազգային հաղորդագրությունների և երկամյա զեկույցների պարբերական զարգացում<br><br>(Համաձայնագրի հոդվածներ 54 (a)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2003թ. դեկտեմբերի 16-ի 2003/87/ԵՀ հրահանգ 601/2012 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2018թ. դեկտեմբերի 19-ի 2018/2066 կանոնակարգ) | 2. Ստեղծել ջերմոցային գազերի նույնականացման համակարգ<br>3 Ապահովել ջերմոցային գազերի դիտանցման, հաշվետվություններ ներկայացնելու, ստուգման և կատարման համակարգերի և հանրային քննարկումների ընթացակարգերի սահմանումների իրավական հիմք<br>4 Ապահովել կլիմայի մասին օրենսդրության պահանջների խախտումների համար պատասխանատվություն սահմանող իրավական հիմք<br>5. Իրականացնել ինստիտուցիոնալ միջոցառումներ՝ ուղղված ազգային կադաստրների զարգացմանը | | ռարութ յուն | խախտումների համար սահմանված պատասխանատվություն<br>3. Ազգային կադաստրների հաշվետվությունները, ազգային հաղորդագրությունները, երկամյա թափանցիկության զեկույցները պարբերական մշակվել և հրապարակվել են | թափանցիկության շրջանականի ապահովում | |
| **116.** | Կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների (ներառյալ | 1. Ընդունել «Կլիմայի մասին» օրենք | 2027թ. 4-րդ եռամսյ | Շրջակա միջավ | Ստեղծվել է ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման ազգային | Երկրի հաշվետվողականությա ն թափանցիկության շրջանակի ապահովում | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ավիացիոն արտանետումների) գույքագրման ազգային համակարգի ստեղծում, քաղաքականությունների, միջոցների և կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծում և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում<br><br>(Համաձայնագրի հոդվածներ 52 (a), (b), 54 (b)<br><br>525/2013 Կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2018թ. մայիսի 30-ի 2018/841 կանոնակարգ) | 2. Ապահովել ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման ազգային համակարգի ստեղծմանն ուղղված իրավական հիմք | ակ | այրի նախարարություն | համակարգ | | Ծվինինգ |
| **117.** | Չափողականության, հաշվետվայնության ու հավաստագրման (MRV) համակարգի հիմնում, կլիմայի փոփոխության խնդիրների լուծմանը ուղղված տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման գործընթացի ձևավորում և հետևողական ամրապնդում<br><br>(Համաձայնագրի հոդված 54 կետ (d)<br><br>525/2013 Կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ | Ապահովել ՉՀՀ (MRV) համակարգի ստեղծմանն ուղղված իրավական հիմք | 2029 թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | ՉՀՀ (MRV) արդյունավետ համակարգը ստեղծվել է | Երկրի հաշվետվողականության թափանցիկության շրջանակի ապահովում | Ծայեքս<br><br>Ծվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2018 թ. մայիսի 30-ի 2018/841 կանոնակարգ (հոդված 5)) | | | | | | |
| **118.** | Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության հայեցակարգի ու ազգային գործողությունների ծրագրի մշակում<br><br>(Համաձայնագրի հոդված 52, կետ (b) և 54, կետ (c),(d)) | Մշակել հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիր | 2021թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | Հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը ստեղծվել է | Հայաստանի կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության բարձրացում | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **119.** | Ջերմոցային գազերի կամ գազերի խմբերի (ՀՖԱ-ներ և ՊՖԱ-ներ) և ըստ ոլորտների առանձնացված աղբյուրներից կատարվող ջերմոցային գազերի մարդածին արտանետումների և կլանիչների կողմից դրանց կլանման ազգային կանխատեսումների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու համակարգի նախատեսում<br><br>(Համաձայնագրի հոդված 54 կետ (j)<br><br>525/2013 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2018 թ. մայիսի 30-ի 2018/841 կանոնակարգ (հոդված 13 և 14)) | Ապահովել ջերմոցային գազերի կամ գազերի խմբերի (ՀՖԱ-ներ և ՊՖԱ-ներ) և ըստ ոլորտների առանձնացված աղբյուրներից կատարվող ջերմոցային գազերի մարդածին արտանետումների և կլանիչների կողմից դրանց կլանման ազգային կանխատեսումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համակարգի իրավական հիմք | 2027թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | Ջերմոցային գազերի կամ գազերի խմբերի (ՀՖԱ-ներ և ՊՖԱ-ներ) և ըստ ոլորտների առանձնացված աղբյուրներից կատարվող ջերմոցային գազերի մարդածին արտանետումների և կլանիչների կողմից դրանց կլանման ազգային կանխատեսումների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համակարգը ստեղծվել է | Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **120.** | Կլիմայական քաղաքականության իրականացման գործում հանրության (սոցիալական գործընկերներ, գործարար հանրություն, քաղաքացիական հասարակություն) մասնակցության ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 54 կետ (j)<br><br>Խորհրդարանի և խորհրդի 2021 թ. դեկտեմբերի 16-ի 2021/119/ԵՄ կանոնակարգ) | Ընդունել կլիմայական քաղաքականության հարցերով հանրության մասնակցության ապահովման իրավական հիմքեր | 2026թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | Կլիմայական քաղաքականության հարցերով հանրության մասնակցության ապահովման իրավական շրջանակը ներդրվել է | Կլիմայական քաղաքականության հարցերին հանրության ներառական մասնակցության ապահովում | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **121.** | Ֆտորացված ջերմոցային գազերի արտանետումների կրճատում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. ապրիլի 16-ի թիվ 517/2014 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2024թ. փետրվարի 7-ի թիվ 2024/573 ֆտորացված ջերմոցային գազերի մասին կանոնակարգի համապատասխան հոդվածների մոտարկում կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված գործընթացում<br>(հոդված 4(1), 4(3), 4(5), 4(7), 5, 7, 8(1), 8(2), 8(7), 8(10), 9, 10(1) և 10(3), 10(1ա), 10(5), | 1.Ընդունել ֆտորացված ջերմոցային գազերի արտանետումների կրճատման վերաբերյալ համապատասխան օրենսդրություն<br>2. Լրամշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Կսահմանվի ոլորտը համակարգող փոխվարչապետի հանձնարարությամբ | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Արտանետումների կանխարգելման գործող համակարգը մշակվել է<br>3. Արտահոսքի ստուգումների գործող ընթացակարգերը և դրա արդյունքների գրանցման համար վարվող էլեկտրոնային գրանցամատյանի ձևը մշակվել է և տվյալների վարման համակարգը գործում է<br>4.Արտազատման պահանջները սահմանվել և կիրառվում են<br>5.Վերապատրաստման և հավաստագրման գործող | Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 10(7), 10(9), 10(10), 10(12), 26 և 27) | | | | համակարգը մշակվել է<br>6.Ընկերությունների կողմից հաշվետվությունների ներկայացման պահանջները սահմանվել և կիրառվում են<br>7.Սառնամատակարարման, սառցամատակարարման, օդորակման և ջերմային պոմպերի կիրառման ոլորտներում արտանետումների (հոսակորուստների) տվյալների հավաքագրում՝ համաձայն հոսակորուստների ստուգման համար վարվող գրանցամատյանների տեղեկատվության<br>8. Իրավակիրարկման ապահովման համակարգը գործում է | | |
| **122.** | Պիտակավորման համակարգի ստեղծում այն արտադրատեսակների և սարքավորումների համար, որոնք պարունակում են ֆտորացված ջերմոցային գազեր, կամ որոնց գործունեությունը կախված է այդ գազերից<br><br>(Համաձայնագրի հոդված 54 կետ (j)<br><br>517/2014 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2024 թ. փետրվարի 7-ի | Համապատասխան արտադրատեսակների և սարքավորումների համար պիտակավորման համակարգի ստեղծման վերաբերյալ օրենսդրության ընդունում | 2027թ. 4-րդ եռամսյակ | Կսահմանվի ոլորտը համակարգող փոխվարչապետի հանձնարարությամբ | Պիտակավորման պահանջները սահմանվել են և կիրառվում են | Ֆտորացված ջերմոցային գազեր պարունակող կամ այդ արտադրատեսակների և սարքավորումների հաշվառում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2024/573/ԵՄ կանոնակարգ (հոդված 12)) | | | | | | |
| **123.** | Օզոնային շերտի պահպանություն և քայքայող նյութերի կրճատում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. սեպտեմբերի 16-ի թիվ 1005/2009 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ 2024թ. մայիսի 11-ի 2024/590 կանոնակարգ<br><br>Հսկման ենթակա նյութերի շուկայահանման և օգտագործման արգելքի սահմանում, բացի վերականգնված ՀՔՖԱ-ներից, որոնք կարող են օգտագործվել որպես սառնագենտ մինչև 2030թ. հունվարի 1 (հոդված 4 (1) և 15 (1ա))<br><br>(Համաձայնագրի հոդված 54 (j)) | 1. Լրամշակել «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքը և մշակել դրանից բխող ենթաօրենսդրական ակտ<br>2. Լրացումներ և փոփոխություններ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքումը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1. Լիազոր մարմինը նշանակվել և գործում է իր իրավասության շրջանակներում<br>2. Հսկման ենթակա նյութերի արտադրությունը՝ օրենսդրորեն ամրագրված արգելքը սահմանվել է<br>3. Օրենսդրորեն սահմանվել են արտադրության, շուկայահանման, օգտագործման, բացառությունների և առանձին շեղումների պայմաններ<br>4. Ներմուծման և արտահանման լիցենզավորման գործող համակարգը ներդրվել է<br>5. Հաշվետվությունների ներկայացման պարտականությունները օրենսդրորեն սահմանվել են<br>6. Արտազատման, վերամշակման, ռեգեներացման (վերականգնում) և ոչնչացման՝ պարտականություններն օրենսդրորեն սահմանվել են<br>7. Հոսակորուստների դիտանցման և տեսչական ստուգումների վերաբերյալ ընթացակարգերը մշակվել և կիրառվում են | Օզոնային շերտը քայքայող նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների կրճատում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 8. Սպասարկող անձնակազմի համար որակավորման նվազագույն պահանջների սահմանում<br>9. Իրավակիրարկման ապահովման համակարգը գործում է<br>10. Հսկման ենթակա նյութերի շուկայահանման և օգտագործման՝ օրենսդրորեն արգելքը՝ նախատեսված բացառություններով ամրագրվել է | | |
| **ԳԼՈՒԽ 5 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԱՅԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ** | | | | | | | |
| **124.** | Ֆինանսական ծառայությունների կարգավորումների մոտարկումը Եվրոպական միության օրենսդրությանը<br><br>(Համաձայնագրի հոդված 189) | 1.Իրականացնել ՀՀ գործող ֆինանսական ծառայությունների կարգավորումների մշտադիտարկումը ԵՄ չափանիշներն համապատասխանության տեսանկյունից<br>2.Նոր իրավական ակտերը մշակել և ընդունել ԵՄ համապատասխան կարգավորումների հիման վրա | Շարունական | Կենտրոնական բանկ | 1.Գործող իրավական ակտերը՝ ըստ անհրաժեշտության փոփոխված են<br>2.Նոր իրավական ակտերը մշակված են ԵՄ համապատասխան կարգավորումների հիման վրա | ԵՄ համապատասխան կարգավորումների հիման վրա կատարված փոփոխություններ կամ մշակված նոր իրավական ակտեր | |
| **ԳԼՈՒԽ 6 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ** | | | | | | | |
| **125.** | Նոր կարգավորիչ միջոցների համար հանրային խորհրդակցության ընթացակարգերի սահմանում<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 2002/21/ԵՀ հրահանգին | Փոփոխել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը, ընդունել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ ոլորտը | 2026 թ. 4-րդ եռամսյակ | Հանրային ծառայությունները կարգավորող | «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի փոփոխությունները և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան | Նոր կարգավորիչ միջոցների համար հանրային խորհրդակցության ընթացակարգերի առկայություն, որը կնպաստի առավել թափանցիկ աշխատանքին և կապահովի | Տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | փոխարինող 2018/1972 հրահանգ) | կարգավորող համապատասխան իրավական ակտ | | հանձն աժողո վ (համա ձայնու թյամբ) | ենթաօրենսդրական ակտն ընդունված են | հասարակության տեղեկացվածությունը կարգավորող մարմնի աշխատանքի վերաբերյալ | |
| **126.** | Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների թույլտվությունների տրամադրման վերաբերյալ օրենսդրության վերանայում<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 2002/20/ԵՀ հրահանգ, 2002թ. մարտի 7-ի թիվ 2002/19/ԵՀ հրահանգին փոխարինող 2018/1972 հրահանգ) | Փոփոխել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», օրենքը, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2029 թ. 4-րդ եռամսյակ | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Ընդհանուր թույլտվություններ նախատեսող և հատուկ, պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում անհատական լիցենզիաների անհրաժեշտությունը սահմանափակող կանոնակարգի իրականացում, ինչը կնպաստի գործարար միջավայրի բարելավմանը, վարչարարության պարզեցմանը և նոր կարգավորիչ միջոցառումների արդյունքում էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում մրցակցության բարձրացմանը | Տեխնիկական աջակցություն |
| **127.** | Ցանցային և տեղեկատվական համակարգերի անվտանգության (NIS 2) պահանջներին ներպետական օրենսդրության համապատասխանեցում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. հուլիսի 23-ի թիվ 910/2014 կանոնակարգը ուժը կորցրած ճանաչող 2022թ. դեկտեմբերի 14-ի 2022/2555/ԵՄ հրահանգ | 1.Ընդունել NIS 2-ի պահանջներին համապատասխան օրենքի կամ փոփոխությունների փաթեթ<br>2.Կիբեռանվտանգության կառավարող մարմինների և լիազորությունների հստակեցում<br>3.Կիբեռանվտանգության միջադեպերի, ռիսկերի և խախտումների վերաբերյալ պաշտոնական զեկուցման համակարգի ներդրում՝ | 2027թ. 2-րդ եռամսյակ | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | 1.NIS 2-ի պահանջներին համապատասխան օրենքը կամ փոփոխություններն ընդունվել են<br>2.Կրիտիկական ենթակառուցվածքների ոլորտների ցանկը թարմացվել է ՝ համաձայն NIS 2-ի, և համակարգչային անվտանգության միջադեպերի արձագանքման թիմի կամ այլ լիազոր մարմնի լիազորությունները հստակեցվել են | 1.Ներպետական օրենսդրության համապատասխանության ապահովումը ԵՄ NIS 2 հրահանգի պահանջներին<br>2.Կազմակերպությունները կիրառում են կիբեռ անվտանգության նվազագույն պահանջները | Փորձագիտական և տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. հուլիսի 23-ի թիվ 910/2014 կանոնակարգ և 2002թ. մարտի 7-ի 2002/20/ԵՀ հրահանգը ուժը կորցրած ճանաչող 2018թ. դեկտեմբերի 11-ի 2018/1972 հրահանգ) | համաձայն NIS 2 հրահանգի պահանջների | | | 3.Զեկուցման պարտադիր համակարգը ներդրվել է | | |
| **128.** | Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և հարակից ենթակառուցվածքների հասանելիության և փոխկապակցման վերաբերյալ օրենսդրության վերանայում<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 2002/19/ԵՀ հրահանգին փոխարինող 2018/1972 հրահանգ) | Փոփոխել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2024թ. 4-րդ եռամսյակ | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Կոնկրետ ցանցային ենթակառուցվածքների հասանելիություն և օգտագործում, գնային հսկողության իրականացում՝ հասանելիության և փոխկապակցման վճարների նկատմամբ՝ ներառյալ ծախսերը հաշվի առնելու պարտավորությունները, թափանցիկության, խտրականության բացառման և հաշվապահական առանձին հաշվառման վարման ապահովում | Տեխնիկական աջակցություն |
| **129.** | Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ազգային կարգավորող մարմնի վերաբերյալ օրենսդրության բարելավում<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 2002/21/ԵՀ հրահանգին փոխարինող 2018/1972 հրահանգ) | Փոփոխել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը և հարակից օրենքները, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2024թ. 4-րդ եռամսյակ | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնու | «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի և հարակից օրենքների փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ազգային կարգավորող մարմնի անկախության և վարչական իրավազորության ամրապնդում, ինչը կնպաստի կարգավորվող ոլորտների կարգավորման արդյունավետության բարձրացմանը և կարգավորվող ոլորտների զարգացմանը | Տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | թյամբ) | | | |
| **130.** | Նոր կարգավորիչ միջոցների համար հանրային խորհրդակցության ընթացակարգերի սահմանում<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 2002/21/ԵՀ հրահանգին փոխարինող 2018/1972 հրահանգ) | Փոփոխել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը, ընդունել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ ոլորտը կարգավորող համապատասխան իրավական ակտ | 2024թ. 4-րդ եռամսյակ | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի փոփոխությունները և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան ենթաօրենսդրական ակտն ընդունված են | Նոր կարգավորիչ միջոցների համար հանրային խորհրդակցության ընթացակարգերի առկայություն, որը կնպաստի առավել թափանցիկ աշխատանքին և կապահովի հասարակության տեղեկացվածությունը կարգավորող մարմնի աշխատանքի վերաբերյալ | Տեխնիկական աջակցություն |
| **131.** | Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ազգային կարգավորող մարմնի որոշումների դեմ բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ստեղծում<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 2002/21/ԵՀ հրահանգին փոխարինող 2018/1972 հրահանգ) | Փոփոխել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը և հարակից օրենքները, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2024թ. 4-րդ եռամսյակ | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի և հարակից օրենքների փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ազգային կարգավորող մարմնի որոշումների դեմ բողոքարկման արդյունավետ մեխանիզմների առկայություն | Տեխնիկական աջակցություն |
| **132.** | Էլեկտրոնային հաղորդակցության հատվածում այն համապատասխան ապրանքների և ծառայությունների շուկաների որոշում, որոնք ենթակա են նախնական կարգավորման, | Փոփոխել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2024թ. 4-րդ եռամսյակ | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախա | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Էլեկտրոնային հաղորդակցության հատվածում նախնական կարգավորման ենթակա ապրանքների և ծառայությունների շուկաները հստակ են և ՇՆԴ առկայությունը որոշելու | Տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | և այդ շուկաների վերլուծություն՝ դրանցում շուկայում նշանակալից դիրքի (ՇՆԴ) առկայությունը որոշելու տեսանկյունից<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 2002/21/ԵՀ հրահանգին փոխարինող 2018/1972 հրահանգ) | | | պարութ յուն | | տեսանկյունից՝ վերլուծված | |
| **133.** | Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների հետ կապված համընդհանուր ծառայության և ծառայություններից օգտվողների իրավունքների վերաբերյալ օրենսդրության վերանայում<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 2002/22/ԵՀ հրահանգին փոխարինող 2018/1972 հրահանգ) | Փոփոխել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2026 թ. 4-րդ եռամսյ ակ | Բարձր տեխնո լոգիակ ան արդյու նաբեր ության նախա րարութ յուն | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Համընդհանուր ծառայության հետ կապված պարտավորությունների մասին (ՀԾՊ) գործող կառուցակարգ ներառյալ ծախսերի հաշվառման և ֆինանսավորման մեխանիզմների ստեղծում, օգտվողների շահերի և իրավունքների նկատմամբ հարգանքի ապահովում՝ մասնավորապես հեռախոսահամարների տեղափոխելիության և արտակարգ իրավիճակների զանգերի ընդհանուր եվրոպական համար (112) ներդնելու միջոցով | Տեխնիկ ական աջակցո ւթյուն |
| **134.** | Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության վերանայում<br><br>(2002թ. հուլիսի 12-ի | Փոփոխել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2024թ. 4-րդ եռամսյ ակ | Բարձր տեխնո լոգիակ ան արդյու նաբեր ության նախա | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Էլեկտրոնային արդյունավետ և անխոչընդոտ հաղորդակցություն՝ անձնական տվյալների պաշտպանության ապահովմամբ | Տեխնիկ ական աջակցո ւթյուն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2002/58/ԵՀ հրահանգ) | | | պարութ յուն | | | |
| **135.** | Ռադիոհաճախականություններ տիրույթի վերաբերյալ օրենսդրության վերանայում<br><br>(2002թ. մարտի 7-ի թիվ 676/2002/ԵՀ որոշում) | Փոփոխել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2026թ. 4-րդ եռամսյակ | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Տիրույթի ներդաշնակեցված հասանելիությունն ու արդյունավետ օգտագործումն ապահովող քաղաքականություն և կառուցակարգեր | Տեխնիկական աջակցություն |
| **136.** | Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի օրենսդրության վերանայում<br><br>(2002/22/ԵՀ հրահանգ, թիվ 531/2012/ԵՄ կանոնակարգը փոփոխող՝ 2015թ. նոյեմբերի 25-ի 2015/2120/ԵՄ կանոնակարգ) | Փոփոխել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը, դրա արդյունքում ըստ անհրաժեշտության ընդունել ենթաօրենսդրական համապատասխան ակտեր | 2026թ. 4-րդ եռամսյակ | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ անհրաժեշտության՝ դրանից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Ինտերնետի ազատ և ոչ խտրական հասանելիության երաշխավորում օգտվողների համար, ինտերնետ տրաֆիկի կառավարման թափանցիկությունն ապահովող կանոնների սահմանում ինտերնետ հասանելիության ծառայությունների մատակարարների նկատմամբ | Տեխնիկական աջակցություն |
| **137.** | Էլեկտրոնային առևտրի վերաբերյալ օրենսդրության մշակում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի՝ 2000թ. հունիսի 8-ի 2000/31/ԵՀ հրահանգ) | Ընդունել «Էլեկտրոնային առևտրի մասին» օրենքը | 2026թ. 4-րդ եռամսյակ | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | «Էլեկտրոնային առևտրի մասին» օրենքն ընդունված է | Էլեկտրոնային առևտրի խթանում և ԵՄ սպառողների ներգրավում և աջակցություն էլեկտրոնային առևտրի ենթակառուցվածքների զարգացմանը | Փորձագիտական և տեխնիկական աջակցություն |
| **138.** | Էլեկտրոնային նույնականացման և | 1.Ընդունել «Էլեկտրոնային նույնականացման և | 2025թ. 4-րդ | Բարձր տեխնո | Տեխնիկական ստանդարտները և ԵՄ-ի հետ | Էլեկտրոնային նույնականացման և | Փորձագիտակա |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հավաստագրման ծառայությունների վերաբերյալ օրենսդրական դաշտի ստեղծում<br><br>Խորհրդարանի և Խորհրդի՝ 2014 թ հուլիսի 23-ի թիվ 910/2014/ԵՄ կանոնակարգ ՝ և 1999/93/ԵՀ հրահանգը ուժը կորցրած ճանաչելու մասին Հանձնաժողովի 2015թ. սեպտեմբերի 8-ի 2015/1505 կիրարկող որոշում<br><br>Հանձնաժողովի՝ 2016 թ. ապրիլի 25-ի 2016/650/ԵՄ կիրարկող որոշում | հավաստագրման ծառայությունների մասին» օրենքի նախագիծ<br>2.Օրինագծում ներառել տեխնիկական ստանդարտները և ԵՄ-ի հետ համատեղելիության մեխանիզմները | եռամսյակ | լոգիական արդյունաբերության նախապարություն | համատեղելիության մեխանիզմները սահմանող «Էլեկտրոնային նույնականացման և հավաստագրման ծառայությունների մասին» օրենքն ընդունված է | հավաստագրման ծառայությունների վերաբերյալ օրենսդրական դաշտի առկայություն և կիրարկում | ն և տեխնիկական աջակցություն |
| **139.** | ԵՄ eIDAS-ի պահանջների համապատասխան վստահության ծառայությունների (trust services) ներդրում՝ ներառյալ էլեկտրոնային նույնականացում, էլ ստորագրություն, էլ. կնիք, ինչպես նաև հավաստագրման գործընթացի ներդրում՝eIDAS սերտիֆիկացմամբ<br><br>(Հանձնաժողովի 2015թ. ի մայիսի 22-ի 2015/806 կիրարկող կանոնակարգ, Հանձնաժողովի 2015թ. փետրվարի 24-ի՝ 2015/296 կիրարկող որոշում | 1. Ընդունել և ներդնել հավատարմագրման գործընթաց<br>2.Ներդնել ԵՄ eIDAS-ի պահանջների համապատասխան վստահության ծառայություններ<br>3.Ապահովել eIDAS սերտիֆիկացումը<br>4.Ընդունել գործընթացն ապահովող ենթաօրենսդրական ակտեր | 2026թ. 4-րդ եռամսյակ | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախապարություն | 1. Հավատարմագրման գործընթացը ներդրված է՝ ապահովելով eIDAS սերտիֆիկացում<br>2. ԵՄ eIDAS-ի պահանջների համապատասխան վստահության ծառայությունները ներդրված են<br>3. Համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Հայկական էլեկտրոնային հարթակներում որակավորված վստահության ծառայությունների և նույնականացման տարբերակված մոտեցումների ներդրմամբ հանրային առցանց ծառայությունների հասանելիության ապահովում, ծառայություն մատուցողների ճանաչում ԵՄ սպառողների կողմից | Փորձագիտական և տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի թիվ 910/2014, Հանձնաժողովի 2015թ. սեպտեմբերի 8-ի 2015/1501 կիրարկող կանոնակարգ<br><br>Խորհրդարանի և Խորհրդի՝ թիվ 910/2014/ԵՄ կանոնակարգ,<br><br>Հանձնաժողովի 2015թ. սեպտեմբերի 8-ի 2015/1502 կիրարկող կանոնակարգ,<br><br>Խորհրդարանի և Խորհրդի՝ թիվ 910/2014 կանոնակարգ, 2015թ. նոյեմբերի 3-ի 2015/1984/ԵՄ կիրարկող որոշում) | | | | | | |
| ԳԼՈՒԽ 7 ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ | | | | | | | |
| **140.** | «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքի և օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունում՝ համապատասխան ԵՄ չափանիշներին<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 1994թ. մայիսի 30-ի 94/22/ԵՀ հրահանգ) | 1.Ընդունել «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենք<br>2.Ընդունել նշված օրենքի օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտեր | 1. 2026թ. 4- րդ եռամսյակ<br>2. 2028թ. 4- րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 1. «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքն ընդունված է<br>2. Ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունված են | ՀՀ տարածքում նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման նպատակով ընդերքի տրամադրման սկզբունքների ու կարգի սահմանում, ընդերքն օգտագործելիս բնակչության առողջությունը, բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ապահովման, ինչպես նաև նավթային գործունեության ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունների կարգավորում | |
| ԳԼՈՒԽ 8 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ | | | | | | | |
| 141.1 | Եվրոպական հետազոտական տարածքին ՀՀ ինտեգրման շարունակականության ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 79) | 1. Շարունակել ԵՄ շրջանակային ծրագրերին ՀՀ մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումների իրականացումը<br>2. Ապահովել ազգային հետազոտական ծրագրերի հասանելիությունը ԵՄ գիտնականների և կազմակերպությունների համար | Շարունակական | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 1. «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ներկայացված հայտերի և երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակում ստորագրված դրամաշնորհային պայմանագրերի թիվ<br>2. Ազգային ծրագրերում ընդգրկվել են ԵՄ գիտնականներ և կազմակերպություններ | Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրված ազգային հետազոտական համակարգի առկայություն | |
| ԳԼՈՒԽ 9 ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ | | | | | | | |
| 142. | Իրավական դաշտի մոտարկում այն ոչ պարենային ապրանքների համար, որոնք թվացյալ լինելով այլ, քան իրականում կան վտանգում են սպառողների առողջությունը կամ անվտանգությունը<br><br>(Համաձայնագրի հոդված 82 կետ (b) | Կատարել փոփոխություններ առկա իրավական ակտերում կամ ընդունել նորը՝ ոչ պարենային արտադրանքի ընդհանուր անվտանգության վերաբերյալ իրավական կարգավորող դաշտի ձևավորման համար | 2027թ. 1-ին եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | Այն արտադրատեսակների համար, որոնք, թվացյալ լինելով այլ, քան իրականում կան, վտանգում են սպառողների առողջությունը կամ անվտանգությունը իրավական կարգավորող դաշտը ձևավորված է | Սպառողների պաշտպանության ոլորտում ոչ պարենային արտադրանքի ընդհանուր անվտանգության ապահովում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդի 1987 թ. հունիսի 25-ի 87/357/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող 2023թ. մայիսի 10-ի 2023/988/ԵՀ կանոնակարգ) | | | | | | |
| **143.** | Սպառողների հետ կնքվող պայմանագրերում անարդար պայմանների դեմ սպառողների իրավունքների պաշտպանություն<br><br>(Համաձայնագրի հոդված 82 կետ (b)<br><br>Խորհրդի 1993թ. ապրիլի 5-ի 93/13/ԵՏՀ հրահանգ) | Կատարել «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքների փոփոխություններ | 2026թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | 1.Անհրաժեշտ կանխատեսելի և որոշակի օրենսդրական հիմքերը պայմանագրերի պայմանների իրավաչափության վերաբերյալ սահմանված են<br>2.Սպառողների հետ կնքվելիք միանալու պայմանագրերում անարդար պայմաններ ներառելու անթույլատրելիության վերաբերյալ դրույթները սահմանված են | Տնտեսավարողների կողմից սպառողների հետ կնքվելիք պայմանագրերում անարդար պայմանների անթույլատրելիության վերաբերյալ դրույթների նախատեսման արդյունքում սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացում | Թվինինգ |
| **144.** | Սպառողներին առաջարկվող ապրանքների գնանշման մասով իրավական կարգավորումների նախատեսում և ապրանքների վաճառքի և միավորի գների հստակ ցուցադրություն<br><br>(Համաձայնագրի հոդված 82 կետ (b)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 1998թ. փետրվարի 16-ի 98/6/ԵՀ հրահանգ) | Ընդունել «Առևտրի և ծառայությունների մասին», «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքների փոփոխություններ | 2026թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | 1. Տնտեսավարող սուբյեկտների համար վաճառվող ապրանքի համար բնորոշ մեկ միավորի գնի ցուցադրման պարտադիր պահանջը սահմանված է<br>2. Փաթեթավորմամբ վաճառվող ապրանքների դեպքում ապրանքի գնի հետ միասին նաև փաթեթվածքի մեջ առկա ապրանքի մեկ միավորի գնի ցուցադրման վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր ներկայացված է | Ապրանքների գների վերաբերյալ ամբողջական և հստակ տեղեկատվության ստացում, սպառողների համար ընտրության և համեմատության գործընթացի դյուրացում | Թվինինգ |
| **145.** | Սպառողների իրավունքների պաշտպանություն՝ | Ընդունել «Սպառողների իրավունքների | 2026թ. 4-րդ | Էկոնոմիկայի | Գնված ապրանքի համապատասխանության | Ապրանքների բնականոն շրջանառության ապահովում, | Թվինին |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ապրանքների անհամապատասխանության դեպքում<br><br>(Համաձայնագրի հոդված 82 կետ (b)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 1999թ. մայիսի 25-ի 1999/44/ԵՀ հրահանգը ուժը կորցրած ճանաչող Խորհրդարանի և Խորհրդի 2019թ. մայիսի 20-ի թիվ 2019/771/ԵՄ հրահանգ) | պաշտպանության մասին» կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքների փոփոխություններ | եռամսյակ | նախարարություն | վերաբերյալ ամբողջական կարգավորումները սահմանված են | ապրանքի անհամապատասխանության դեպքում հստակ և կանխատեսելի պաշտպանության միջոցների սահմանում | գ |
| **146.** | Շուկայահանված արտադրանքի ընդհանուր անվտանգության պահանջների սահմանում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2001թ. դեկտեմբերի 3-ի 2001/95/ԵՀ հրահանգը ուժը կորցրած ճանաչող 2023թ. մայիսի 10-ի 2023/988/ԵՀ) | Կատարել փոփոխություններ առկա իրավական ակտերում կամ ընդունել նորը ոչ պարենային արտադրանքի ընդհանուր անվտանգության վերաբերյալ իրավական կարգավորող դաշտի ձևավորման համար | 2028թ. 1-ին եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | Շուկայահանված ոչ պարենային արտադրանքի, որոնք վտանգում են սպառողների առողջությունը կամ անվտանգությունը, ընդհանուր անվտանգության պահանջները կարգավորող իրավական դաշտը ձևավորված է | Սպառողների պաշտպանության ոլորտում ոչ պարենային արտադրանքի ընդհանուր անվտանգության ապահովում և առողջության պահպանում | |
| **147.** | Ֆինանսական ծառայությունների ոլորտի սպառողների իրավունքների պաշտպանություն<br><br>(Համաձայնագրի հոդված 82 կետ (b)<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2002 թ. սեպտեմբերի 23-ի 2002/65/ԵՀ հրահանգ | Ըստ անհրաժեշտության ընդունել «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05, Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, | 2022թ. 1-ին եռամսյակ | Կենտրոնական բանկ | «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05, Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի | ԵՄ չափանիշներին համահունչ ֆինանսական ծառայությունների ոլորտի սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված կարգավորումներ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների, ինչպես նաև ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03 | | | կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների, ինչպես նաև ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03 ընդունված են | | |
| **148.** | Ներքին շուկայում սպառողների նկատմամբ տնտեսավարողների անարդար առևտրային գործելակերպի կանխարգելում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2005 թ. մայիսի 11-ի 2005/29/ԵՀ հրահանգ) | Ընդունել «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքների փոփոխություններ | 2026թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | Տնտեսավարող սուբյեկտների կողմից սպառողների դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ հստակ կարգավորումները սահմանված են անարդար առևտրային գործելակերպի ընդհանուր բնութագրերի ու դրա առավել կանխատեսելի դրսևորումները սահմանված են | Սպառողների իրավունքների խախտման հնարավոր դեպքերի վերաբերյալ առավել հստակ պատկերացում, և անարդար գործելակերպից պաշտպանություն, տնտեսավարողների պատասխանատվության բարձրացում և շուկայի ընդհանուր թափանցիկության ու վստահելիության ամրապնդում | Թվինինգ |
| **149.** | Սպառողների իրավունքների պաշտպանություն՝ մոլորեցնող և համեմատություններ պարունակող գովազդի շրջանակում | Ընդունել «Գովազդի մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» և/կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքների փոփոխություններ և ընդունել դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը | 2026թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | Տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գովազդների կանոնակարգման և ապակողմնորոշիչ և մոլորեցնող գովազդների դեպքում դրանց վերահսկողության վերաբերյալ | Ապակողմնորոշիչ և մոլորեցնող գովազդներից պաշտպանություն, սպառողների տեղեկացված ընտրության հնարավորություն, տնտեսավարողների գովազդային գործունեության վերահսկելիություն և շուկայում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Խորհրդարանի և Խորհրդի 2006 թ. դեկտեմբերի 12-ի 2006/114/ԵՀ հրահանգ) | | | | կարգավորումները սահմանված են | արդար մրցակցության ու վստահության բարձրացում | |
| **150.** | Սպառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու ներպետական մարմինների միջև համագործակցություն<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2004 թ. հոկտեմբերի 27-ի թիվ 2006/2004 կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող (ԵՀ) 2017թ. դեկտեմբերի 12-ի 2017/2394/ԵՀ կանոնակարգ) | 1. Ընդունել «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքների փոփոխություններ և ընդունել դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը<br>2. Ընդունել հրահանգների կիրարկման շրջանականում անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտեր | 2027թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | 1. Համապատասխան լիազորություններով օժտված կոնտակտային մարմինը ստեղծված է<br>2. Հրահանգի կիրարկման շրջանականում անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերն ընդունված են | Սպառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու ներպետական մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովում | |
| **151.** | Սպառողների իրավունքների պաշտպանություն հանգստի ծառայությունների երկարաժամկետ պայմանագրերի դեպքում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. հունվարի 14-ի 2008/122/ԵՀ հրահանգ) | Ընդունել «Զբոսաշրջության մասին» օրենքի նախագիծ, հարակից օրենքներ, և ենթաօրենսդրական ակտեր | 2026թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | Զբոսաշրջության մասին օրենքում նոր դրույթների և այլ կանոնակարգերն ամրագրված են | Սպառողների իրավունքների լրացուցիչ պաշտպանություն, տեղեկատվության մատչելիություն և պայմանագրային հարաբերությունների թափանցիկություն, ինչը կնպաստի անբարեխիղճ պրակտիկայի կանխմանը և վստահության ամրապնդմանը զբոսաշրջային շուկայում | Ծայեքս |
| **152.** | Սպառողների շահերի պաշտպանության կենտրոնական մարմնի սահմանում<br><br>(Համաձայնագրի Հոդված 83 | 1.Իրականացնել փոփոխություններ «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքներում<br>2.Ընդունել հրահանգի | 2027թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքների փոփոխություններն ընդունված են<br>2. Հրահանգի կիրարկման | Համապատասխան լիազորություններով օժտված՝ սպառողների շահերի պաշտպանության կենտրոնական մարմնի առկայություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2009 թ. ապրիլի 23-ի 2009/22/ԵՀ հրահանգին փոխարինող Խորհրդարանի և Խորհրդի 2020 թ. նոյեմբերի 25-ի 2020/1828 հրահանգ) | կիրարկման շրջանականում անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտեր | | | շրջանականում անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերն ընդունված են | | |
| **153.** | Սպառողների իրավունքների պաշտպանություն՝ հեռակա և ձեռնարկության շենքից դուրս կնքվող վաճառքի պայմանագրերի շրջանակում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2011 թ. հոկտեմբերի 25-ի 2011/83/ԵՄ հրահանգ) | Ընդունել «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» կամ անհրաժեշտության դեպքում այլ օրենքների փոփոխություններ | 2026թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | Հեռակա և ձեռնարկության շենքից դուրս առևտրի շրջանակներում սպառողներին տրամադրվող տեղեկատվության և սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ կարգավորումները սահմանված են | Առցանց առևտրի ընթացքում սպառողների լիարժեք տեղեկացվածություն, հստակ իրավունքներ և պաշտպանություն, ինչը կնպաստի էլեկտրոնային առևտրի ոլորտում վստահության բարձրացմանը և սպառողի շահերի արդյունավետ պաշտպանությանը | |
| **154.** | Սպառողական վեճերի լուծման առցանց կառուցակարգերի ձևավորում<br><br>(Համաձայնագրի հոդված 83<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2013 թ. մայիսի 21-ի թիվ 524/2013/ԵՄ կանոնակարգ ) | Ընդունել էլեկտրոնային նոր համակարգ կամ գործող էլեկտրոնային համակարգերը արդիականացնել, ինչպես նաև դրա գործածման համար «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում կամ այլ օրենքներում իրականացնել փոփոխություններ | 2027թ. 4-րդ եռամսյակ | Արդարադատության նախարարություն | Էլեկտրոնային համակարգով վեճի լուծման բիզնես գործընթացի ամբողջական իրականացման հնարավորությունն առկա է և «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի կամ այլ օրենքների փոփոխություններն ընդունված են | Սպառողների համար վեճերի լուծման առցանց կառուցակարգերի առկայություն | |
| **155.** | Սպառողական վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների ձևավորում<br><br>(Համաձայնագրի հոդված 83<br><br>Խորհրդարանի և Խորհրդի | Իրականացնել փոփոխություններ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում կամ այլ օրենքներում | 2027թ. 4-րդ եռամսյակ | Արդարադատության նախարարություն | «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի կամ այլ օրենքների փոփոխություններն ընդունված են | Սպառողների համար վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների հասանելիություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2013 թ. մայիսի 21-ի 2013/11/ԵՄ հրահանգ) | | | | | | |
| **156.** | Սպառողական վեճերի շրջանակներում փոխհատուցման մեխանիզմներ սահմանող կարգավորումների ընդունում և կիրարկում<br><br>(Համաձայնագրի հոդված 83<br><br>Հանձնաժողովի 2013 թ. հունիսի 11-ի առաջարկություն (2013/396/ԵՄ) | Իրականացնել փոփոխություններ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում կամ այլ օրենքներում | 2027թ. 4-րդ եռամսյակ | Արդարադատության նախարարություն | Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կամ այլ օրենքների փոփոխություններն ընդունված են | Սպառողների համար առաջացող վեճերի շրջանակներում հնարավոր կոլեկտիվ փոխհատուցման մեխանիզմների առկայություն | |
| **157.** | Զբոսաշրջային փաթեթների և զբոսաշրջային առանձին ծառայությունների մատուցման դեպքում սպառողների իրավունքների պաշտպանություն<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2015 թ. նոյեմբերի 25-ի 2015/2302/ԵՄ հրահանգ ) | Ընդունել «Զբոսաշրջության մասին» օրենքի նախագծի, հարակից օրենքների, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերը | 2026թ. 4-րդ եռամսյակ | Էկոնոմիկայի նախարարություն | Զբոսաշրջային փաթեթների վերաբերյալ օրենսդրական ակտերն ընդունված են | Պայմանագրային տեղեկատվության թափանցիկություն և փոխհատուցման երաշխիքներ՝ ճանապարհորդության խափանման կամ չկատարման դեպքում, ինչը կնպաստի զբոսաշրջության ոլորտում սպառողական վստահության և ծառայությունների որակի բարձրացմանը | Թայեքս |
| **158.** | Սպառողների բողոքների հավաքագրման և մշակման համար թվային գործիքակազմի ներդրում<br><br>(Համաձայնագրի հոդված 82 կետ (b)) | Ստեղծել սպառողների բողոքների հավաքագրման համար նախատեսված էլեկտրոնային բազմամոդուլ հարթակ | 2027թ. 3-րդ եռամսյակ | Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձն | Սպառողների բողոքների՝ էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացնելու և լուծելու հնարավորությունն առկա է | Սպառողների բողոքների լուծման էլեկտրոնային համակարգի առկայություն | Տեխնիկական աջակցություն<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | աժողով | | | |
| **159.** | Սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող անկախ կառույցների (ասոցիացիաների, հասարակական կազմակերպությունների և այլն) զարգացման և սպառողների ներկայացուցչական մարմինների միջև շփումների խրախուսում<br><br>(Համաձայնագրի հոդված 82 (d)) | Ընդունել սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող անկախ կառույցների (ասոցիացիաների, հասարակական կազմակերպությունների և այլն) զարգացման և սպառողների ներկայացուցչական մարմինների միջև շփումների խրախուսման միջոցառումների ծրագիր | 2027թ. 4-րդ եռամսյակ | Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով | Սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող անկախ կառույցների զարգացման և սպառողների ներկայացուցչական մարմինների միջև շփումների խրախուսման միջոցառումների ծրագիրը մշակված և իրականացված է | Սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հզորացված անկախ կառույցների և ներկայացուցչական մարմինների միջև ակտիվ շփումների առկայություն | Թվինինգ |
| **160.** | Սպառողական վարկային պայմանագրերի կարգավորման մեխանիզմների ներդրում<br><br>(Խորհրդարանի և խորհրդի 2008թ. ապրիլի 23-ի թիվ 2008/48/ԵՀ հրահանգ) | Մշտադիտարկել սպառողական կրեդիտավորման ոլորտում ԵՄ կարգավորման զարգացումներին և, ըստ անհրաժեշտության, համապատասխանեցնել ՀՀ սպառողական կրեդիտավորման գործող կարգավորման դաշտը ԵՄ պահանջներին | Շարունակական | Կենտրոնական բանկ | Սպառողական կրեդիտավորման վերաբերյալ ԵՄ պահանջները ներդրված են «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում և դրա հիման վրա այլ իրավական ակտերն ընդունված են | Վարկային պայմանագրերի մեխանիզմների առկայություն | |
| **ԳԼՈՒԽ 10 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | | | | | | | |
| **161.** | Թափանցիկ և կանխատեսելի աշխատանքային պայմանների վերաբերյալ աշխատողների տեղեկացված լինելու իրավունքի ապահովում | Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա | 2027թ. 1-ին եռամսյակ | Աշխատանքի և սոցիալական հարցերի | 1.Նախատեսված են կարգավորումներ աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ կիրառվող այն | Աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ կիրառվող պայմանների վերաբերյալ աշխատողների տեղեկացված | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի՝ 1991թ. հոկտեմբերի 14-ի 91/533/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող Խորհրդարանի և Խորհրդի 2019թ. հունիսի 20-ի 2019/1152 հրահանգ) | խնդիրները և ըստ անհրաժեշտության կատարել փոփոխություններ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում»՝ թափանցիկ և կանխատեսելի աշխատանքային պայմանների վերաբերյալ աշխատողների տեղեկացված լինելու իրավունքի ապահովման նպատակով | | նախա րարութ յուն | պայմանների շրջանակի վերաբերյալ, որոնց մասին գործատուները պարտավոր են տեղեկացնել աշխատողներին<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | լինելու իրավունքի ապահովում և իրար հաջորդող որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերից բխող չարաշահումների կանխարգելում | |
| **162.** | Որոշակի ժամկետով և համեմատելի մշտական /անորոշ ժամկետով/ աշխատողների համար միասնական իրավական երաշխիքների սահմանում և հավասար հնարավորությունների ապահովում<br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի՝ 1999թ. հունիսի 28-ի 1999/70/ԵՀ հրահանգ) | Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրները և ըստ անհրաժեշտության «Աշխատանքային օրենսգրքում» կատարել փոփոխություններ որոշակի ժամկետով աշխատողների համար մշտական /անորոշ ժամկետով/ աշխատողների համեմատ ոչ խտրական վերաբերմունքի ապահովման, ինչպես նաև իրար հաջորդող որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերից բխող չարաշահումները կանխարգելելու նպատակով | 2027թ. 1-ին եռամսյ ակ | Աշխա տանքի և սոցիալ ական հարցե րի նախա րարութ յուն | 1. ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որով ամրագրվում են որոշակի ժամկետով և համեմատելի մշտական /անորոշ ժամկետով/ աշխատողների համար միասնական իրավական երաշխիքների սահմանման և հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ կարգավորումներ ընդունված են<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | 1. Որոշակի ժամկետով և համեմատելի մշտական /անորոշ ժամկետով/ աշխատողների համար միասնական իրավական երաշխիքների սահմանում հիմնական աշխատանքի տեղավորման հավասար հնարավորությունների ապահովում՝ բացառելով խտրական վերաբերմունքը<br>2. Իրար հաջորդող որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերից բխող չարաշահումների կանխարգելում | Տեխնիկ ական աջակցո ւթյուն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **163.** | Ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատողների համար խտրական վերաբերմունքի բացառման ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1997թ. դեկտեմբերի 15-ի 97/81/ԵՀ հրահանգ) | Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրները և ըստ անհրաժեշտության «Աշխատանքային օրենսգրքում» կատարել փոփոխություններ ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններով աշխատողների համար միասնական իրավական դաշտի սահմանման և խտրականության բացառման նպատակով | 2027թ. 1-ին եռամսյակ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 1.Ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատողների համար միասնական իրավական դաշտ ստեղծելու և խտրական վերաբերմունքը բացառելու նպատակով օրենսդրական փոփոխությունները կատարված են<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | Ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններով աշխատողների համար ազգային օրենսդրությամբ ապահովվում են հրահանգին համապատասխան երաշխիքներ | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **164.** | Որոշակի ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային հարաբերություններ ունեցող աշխատողների համար աշխատանքային իրավունքների, երաշխիքների, առողջ և անվտանգ պայմանների ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1991 թ. հունիսի 25-ի 91/383/ԵՏՀ հրահանգ) | Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրները և ըստ անհրաժեշտության «Աշխատանքային օրենսգրքում» կատարել փոփոխություններ ո րոշակի ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային հարաբերություններ ունեցող աշխատողների համար աշխատանքային | 2027թ. 1-ին եռամսյակ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 1.Որոշակի ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների աշխատանքային միջավայրի բարելավման համար անհրաժեշտ պայմանները սահմանող օրենսդրական կարգավորումներ՝ աշխատողների անվտանգության և առողջության պաշտպանության ավելի լավ մակարդակ երաշխավորելու համար ընդունված են<br>2.Պետական վերահսկողությունն | Որոշակի ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային հարաբերություններ ունեցող աշխատողների համար աշխատանքային իրավունքների, երաշխիքների, առողջ և անվտանգ պայմանների ապահովման առավել բարձր և միատեսակ մակարդակի ապահովում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | իրավունքների, երաշխիքների, առողջ և անվտանգ պայմանների ապահովման նպատակով | | | իրականացվում է | | |
| **165.** | Կոլեկտիվ (զանգվածային) ազատումների դեպքում աշխատողների տեղեկացման, նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցության ապահովում՝ աշխատանքից ազատման հետևանքները մեղմելու նպատակով<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1998թ. հուլիսի 20-ի 98/59/ԵՀ հրահանգ) | Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրները և ըստ անհրաժեշտության «Աշխատանքային օրենսգրքում» կատարել փոփոխություններ կոլեկտիվ (զանգվածային) ազատումների դեպքում աշխատողների տեղեկացման, նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցության ապահովման նպատակով | 2028թ. 1-ին եռամսյակ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կոլեկտիվ (զանգվածային) ազատումների դեպքում աշխատողների տեղեկացման, նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցության ապահովման ընթացակարգեր նախատեսող կարգավորումներն ընդունված են | Կոլեկտիվ ազատումների դեպքերում աշխատանքային իրավունքների պաշտպանության առավել նպաստավոր պայմանների ապահովում, այդ թվում՝ աշխատողների ներկայացուցիչների միջոցով | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **166.** | Կազմակերպությունների կառուցվածքային փոփոխությունների (վերակազմակերպման) ժամանակ գործատուի փոփոխության դեպքում աշխատողների աշխատանքային իրավունքների փոխանցման և պաշտպանության ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, | Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրները և ըստ անհրաժեշտության «Աշխատանքային օրենսգրքում» կատարել փոփոխություններ կազմակերպությունների | 2027թ. 1-ին եռամսյակ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 1.Կազմակերպությունների կառուցվածքային փոփոխությունների (վերակազմակերպման) ժամանակ գործատուի փոփոխության դեպքում աշխատողների աշխատանքային իրավունքների փոխանցման և պաշտպանության ապահովման (երաշխավորման) մեխանիզմները ընդունված են | Կազմակերպությունների կառուցվածքային փոփոխությունների (վերակազմակերպման) ժամանակ գործատուի փոփոխության դեպքում աշխատողների աշխատանքային իրավունքների փոխանցման և պաշտպանության (այդ թվում՝ աշխատողների ներկայացուցիչների միջոցով) ապահովում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 85, 274<br><br>Խորհրդի 2001թ. մարտի 12-ի 2001/23/ԵՀ հրահանգ) | կառուցվածքային փոփոխությունների (վերակազմակերպման) ժամանակ գործատուի փոփոխության դեպքում աշխատողների աշխատանքային իրավունքների փոխանցման և պաշտպանության ապահովման նպատակով | | | 2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | | |
| **167.** | Սոցիալական երկխոսության ամրապնդման և կազմակերպությունների ներսում փոխադարձ վստահության խթանման նպատակով՝ աշխատողներին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման մեխանիզմների ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2002թ. մարտի 11-ի 2002/14/ԵՀ հրահանգ) | Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրները և ըստ անհրաժեշտության «Աշխատանքային օրենսգրքում» կատարել փոփոխություններ սոցիալական երկխոսության ամրապնդման և կազմակերպությունների ներսում փոխադարձ վստահության խթանման նպատակով՝ աշխատողներին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման մեխանիզմների ապահովման համար | 2027թ. 1-ին եռամսյակ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կազմակերպությունների կառուցվածքային փոփոխությունների (վերակազմակերպման) ժամանակ գործատուի փոփոխության դեպքում աշխատողների աշխատանքային իրավունքների փոխանցման և պաշտպանության ապահովման (երաշխավորման) մեխանիզմները նախատեսող կարգավորումներն ընդունված է | Սոցիալական երկխոսության ամրապնդման և կազմակերպությունների ներսում փոխադարձ վստահության խթանման գործուն մեխանիզմների ամրագրում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **168.** | Աշխատաժամանակին, հանգստի ժամանակին, | Վերհանել օրենսդրության մեջ (հրահանգի | 2028թ. 1-ին | Աշխատանքի | 1. Հրահանգի դրույթներին համապատասխան՝ | Աշխատողների առողջության պահպանության և | Տեխնիկական |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գիշերային աշխատանքին վերաբերող՝ ԵՄ լավագույն փորձին համապատասխան օրենսդրական կարգավորումների ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2003թ. Նոյեմբերի 4-ի 2003/88/ԵՀ հրահանգ) | պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրները և ըստ անհրաժեշտության փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում աշխատաժամանակին, հանգստի ժամանակին գիշերային աշխատանքին վերաբերող օրենսդրական կարգավորումները | եռամսյակ | և սոցիալական հարցերի նախարարություն | աշխատաժամանակի, հանգստի ժամանակի, գիշերային աշխատանքի վերաբերյալ կարգավորումներն ընդունված են<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | անվտանգության ապահովման նպատակով աշխատանքային միջավայրի բարելավում, հատուկ աշխատանքային պայմանների վնասակար ազդեցությունը նվազեցնելու և աշխատանքի կազմակերպման ժամանակ աշխատանքն աշխատողի կարիքներին հարմարեցնելու հիմնական սկզբունքի ապահովում | աջակցություն<br><br>Թայեքս |
| **169.** | Աշխատանքի և մասնագիտության մեջ հավասար վերաբերմունքի ապահովման համար օրենսդրական հիմքերի սահմանում՝ կանխելով խտրականությունը և խթանելով հավասար հնարավորությունները<br><br>(Համաձայնագրի հոդված 12 Խորհրդի 2000թ. նոյեմբերի 27-ի 2000/78/ԵՀ հրահանգ) | Իրականացնել աշխատանքի և զբաղվածության ոլորտում հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված օրենսդրական բարեփոխումներ և ներդնել խտրականության կանխարգելման և արձագանքման արդյունավետ կառուցակարգեր | 2027թ. 4-րդ եռամսյակ | Արդարադատության նախարարություն | Աշխատանքային հարաբերություններում խտրականությունն արգելող կարգավորումները ներդրված են՝ ներառելով արդյունավետ կառուցակարգեր խտրականության կանխարգելման և խտրականության դեպքերին պատշաճ արձագանք ապահովելու համար | Աշխատանքային հարաբերություններում հավասար վերաբերմունքի, հավասար հնարավորությունների խթանում և խտրականության կանխարգելում | Փորձագիտական և տեխնիկական աջակցություն |
| **170.** | Աշխատանքի և զբաղվածության ոլորտում տղամարդկանց և կանանց իրավահավասարության ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274 | Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրները և ըստ | 2023թ. 4-րդ եռամսյակ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախա | Աշխատանքի և զբաղվածության ոլորտում տղամարդկանց և կանանց իրավահավասարության ապահովման վերաբերյալ կարգավորումներն ընդունված են | 1.Աշխատանքի և զբաղվածության ոլորտում տղամարդկանց և կանանց իրավահավասարության ապահովման օրենսդրական հիմքերի կատարելագործում, և խտրականության բացառման գործուն մեխանիզմների | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Խորհրդարանի և Խորհրդի 2006թ. հուլիսի 5-ի 2006/54/ԵՀ հրահանգ) | անհրաժեշտության փոփոխություններ կատարել աշխատանքի և զբաղվածության ոլորտը կարգավորող իրավական ակտերում տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքն ամրագրող իրավակարգավորումների կատարելագործման նպատակով | | րարութ յուն | | ներդրում, այդ թվում՝ իրավական՝ արդյունավետ, համաչափ և զսպող պաշտպանության միջոցների սահմանում<br>2.Համապատասխան ինստիտուցիոնալ, այդ թվում՝ պատասխանատվության միջոցներ սահմանող մեխանիզմների ստեղծում | |
| **171.** | Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ու դրանց հասանելիության ոլորտում սեռի հիման վրա խտրականության (բացառությամբ զբաղվածության և մասնագիտությամբ զբաղվելու հարցերում) դեմ պայքարի գործուն կառուցակարգերի առկայության ապահովում<br><br>(Խորհրդի 2004թ. դեկտեմբերի 13-ի 2004/113/ԵՀ հրահանգ) | Ընդունել ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ու դրանց հասանելիության ոլորտում սեռի հիման վրա խտրականության (բացառությամբ զբաղվածության և մասնագիտությամբ զբաղվելու հարցերում) դեմ պայքարի գործուն կառուցակարգեր սահմանող կարգավորումներ | 2026թ. 4-րդ եռամսյ ակ | Արդար ադատ ության նախա րարութ յուն | Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ու դրանց հասանելիության ոլորտում իրավահավասարության ապահովման համար իրավական հիմք ստեղծող օրենքն ընդունված է | Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ու դրանց հասանելիության ոլորտում իրավահավասարության ապահովման իրավական հիմքերի ստեղծում, խտրականության բացառման գործուն կառուցակարգերի ներդնում | Տեխնիկ ական աջակցո ւթյուն<br><br>Թայեքս |
| **172.** | Հղի աշխատողների և վերջերս ծննդաբերած կամ կրծքով կերակրող աշխատողների անվտանգության ապահովմանն և | 1. Վեր հանել օրենսդրության մեջ (հրահանգի պահանջներին համապատասխանեցման մասով) և իրավակիրառական | 2027թ. 1-ին եռամսյ ակ)ծ | Աշխա տանքի և սոցիալ ական հարցե | 1.Հղի աշխատողների և վերջերս ծննդաբերած կամ կրծքով կերակրող աշխատողների աշխատանքի անվտանգության և առողջության բարելավմանն | Հղի աշխատողների և վերջերս ծննդաբերած կամ կրծքով կերակրող աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության առավել | Տեխնիկ ական աջակցո ւթյուն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | առողջության պահպանությանն ուղղված կարգավորումների առկայության ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1992թ. հոկտեմբերի 19-ի 92/85/ԵՏՀ հրահանգ և 92/85/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. փետրվարի 26-ի 2014/27/ԵՄ հրահանգ) | պրակտիկայում առկա խնդիրները<br>2. Ըստ անհրաժեշտության փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում հղի աշխատողների և վերջերս ծննդաբերած կամ կրծքով կերակրող աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության նպատակով | | րի նախա րարութ յուն | ուղղված կարգավորումներն ընդունված են<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | բարձր մակարդակի ապահովում | |
| **173.** | Սոցիալական ապահովության հարցերում տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրարկման ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1978թ. դեկտեմբերի 19-ի 79/7/ԵՏՀ հրահանգ) | 1. Վեր հանել սոցիալական ապահովության ոլորտում կանանց և տղամարդկանց միջև հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրարկման ապահովման գծով խնդիրները<br>2. Ըստ անհրաժեշտության՝ որոշակի փոփոխություններ կատարել վերաբերելի ՀՀ օրենսդրության մեջ | 2023թ. 4-րդ եռամսյակ | Աշխա տանքի և սոցիալ ական հարցե րի նախա րարութ յուն | Ընդունված են սոցիալական ապահովության ոլորտում կանանց և տղամարդկանց միջև հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրարկումն ապահովող օրենսդրական կարգավորումներ | Սոցիալական ապահովության հարցերում տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրարկման ապահովում | Տեխնիկ ական աջակցո ւթյուն<br><br>Թայեքս |
| **174.** | Աշխատավայրում աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանության ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1989թ. հունիսի 12-ի | Սահմանել աշխատավայրում աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանության ապահովման պահանջները ՀՀ օրենսդրությամբ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Առողջ ապահ ության նախա րարութ յուն | 1.Աշխատավայրում աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանության ապահովման պահանջները սահմանող օրենսդրական կարգավորումներն ընդունված են | 1.Աշխատանքային միջավայրի, աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության բարելավման միջոցների ներդնում<br>2.Արտադրական ռիսկերի կանխարգելման, աշխատանքի պաշտպանության ապահովման, ռիսկային | Տեխնիկ ական աջակցո ւթյուն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 89/391/ԵՏՀ հրահանգ<br><br>Խորհրդի 1989թ. նոյեմբերի 30-ի 89/654/ԵՏՀ հրահանգ) | | | | 2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | գործոնների և դժբախտ դեպքերի ու մասնագիտական հիվանդությունների կանխարգելման, աշխատողների իրազեկման, ուսուցման ընդհանուր սկզբունքների և ցուցումների սահմանում<br>3.Աշխատավայրին և աշխատատեղերին ներկայացվող պահանջների (շենքերի, շինությունների ամրություն և հուսալիություն, ջերմաստիճան, օդափոխություն, լուսավորություն, հատակներ, պատեր, տանիքներ, դռներ, դարպասներ, վթարային անցուղիներ և աշխատավայրի այլ պայմաններ) սահմանում | |
| **175.** | Աշխատավայրում աշխատողների կողմից աշխատանքային սարքավորումների օգտագործման՝ անվտանգության և առողջության նվազագույն պահանջների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. սեպտեմբերի 16-ի 2009/104/ԵՀ հրահանգ) | Սահմանել աշխատավայրում աշխատողների կողմից աշխատանքային սարքավորումների օգտագործման՝ անվտանգության և առողջության նվազագույն պահանջները | 2029թ. 4-րդ եռամսյակ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 1. Աշխատավայրում աշխատանքային սարքավորումների օգտագործման՝ անվտանգ և առողջության նվազագույն պահանջները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | Աշխատողների կողմից աշխատանքային սարքավորումների օգտագործման նվազագույն չափորոշիչների սահմանում, «աշխատանքային սարքավորում», «ռիսկի գոտի», «աշխատանքային սարքավորումների օգտագործում» և այլ հասկացությունների որոշակիացում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **176.** | Աշխատավայրում աշխատողների կողմից անհատական պաշտպանական միջոցների օգտագործման համար առողջության և անվտանգության վերաբերյալ նվազագույն պահանջների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1989թ. նոյեմբերի 30-ի 89/656/ԵՏՀ հրահանգ) | Սահմանել գործատուի կողմից անհատական պաշտպանության միջոցների տրամադրման և աշխատողների կողմից դրանց կիրառության վերաբերյալ նվազագույն պահանջները ՀՀ օրենսդրությամբ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1.Անվտանգության ապահովման և առողջության պահպանության նվազագույն պահանջները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | 1.Աշխատանքային միջավայրի, աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության միջոցների բարելավում<br>2.Աշխատավայրում անհատական պաշտպանության միջոցների օգտագործման կանոնների հաստատում<br>3.Արտադրական ռիսկերի կանխարգելման, աշխատանքի պաշտպանության ապահովման, ռիսկային գործոնների և դժբախտ դեպքերի ու մասնագիտական հիվանդությունների կանխարգելման, աշխատողների իրազեկման, ուսուցման ընդհանուր սկզբունքների և ցուցումների սահմանում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **177.** | Ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների ապահովում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի՝ 1992թ. հունիսի 24-ի 92/57/ԵՏՀ հրահանգ) | 1. Մշակել տեխնիկական առաջադրանք<br>2. Կազմակերպել մրցութային գործընթաց<br>3. Ընտրել համապատասխան կապալառու ընկերություն<br>4. Տեղայնացնել ԵՄ կարգավորումները և ներառել ՀՀ-ում գործող օրենսդրության մեջ կամ մշակել նոր նորմատիվ ակտեր | 2029թ. 4-րդ եռամսյակ | Քաղաքաշինության կոմիտե | 1.Շինարարական նորմերի ընդունում և իրազեկում<br>2. Շինարարական հրապարակում անվտանգության կանոնների ապահովման պարտադիր պահանջների վերաբերյալ իրազեկում | ԵՄ նորմերին մոտարկված իրավակարգավորումներ | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **178.** | Աշխատավայրում ասբեստի ներգործությանն առնչվող ռիսկերից աշխատողների պաշտպանություն<br>(Խորհրդարանի և Խորհրդի 2009թ. նոյեմբերի 30-ի 2009/148/ԵՀ հրահանգ) | Վերանայել և ԵՄ առողջապահության ոլորտին վերաբերվող չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. դեկտեմբերի 6-ի ««Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 27-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համապատասխան հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |
| **179.** | Աշխատավայրում քաղցկեղածին կամ մուտագեն նյութերի ներգործությանն առնչվող ռիսկերից աշխատողների պաշտպանություն<br>(Խորհրդարանի և Խորհրդի 2004թ. ապրիլի 29-ի 2004/37/ԵՀ հրահանգ) | Վերանայել և ԵՄ առողջապահության ոլորտին վերաբերվող չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. դեկտեմբերի 6-ի ««Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 27-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համապատասխան հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |
| **180.** | Աշխատավայրում կենսաբանական նյութերի | Վերանայել և ԵՄ առողջապահության ոլորտին | 2027թ. 4-րդ | Առողջապահ | ԵՄ չափանիշներին համապատասխան հրամանի | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հետ շփմանն առնչվող վտանգներից աշխատողների պաշտպանություն<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2000թ. սեպտեմբերի 18-ի 2000/54/ԵՀ հրահանգ) | վերաբերվող չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. օգոստոսի 15-ի ««Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» N 2.2-002-05 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 756-Ն հրամանը | եռամսյակ | ության նախարարություն | առկայություն | առողջապահական նորմերի առկայություն | |
| **181.** | Էկրանային արտապատկերման սարքավորումների ներգործությանն առնչվող ռիսկերից աշխատողների պաշտպանություն<br><br>(Խորհրդի 1990թ. մայիսի 29-ի 90/270/ԵՏՀ հրահանգ) | Վերանայել և ԵՄ առողջապահության ոլորտին վերաբերվող չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. սեպտեմբերի 24-ի ««Կազմակերպություններում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (համակարգիչների) անվտանգ շահագործման և օգտագործման» N 2.2.4-015-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 19-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համապատասխան հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **182.** | Հիվանդանոցներում և առողջապահության համակարգում սուր գործիքներից ստացված վնասվածքների կանխում<br>(ՀԱՀԱԵԱ-ի և ՀԾՄԵՖ-ի կողմից ընդունված 2010/32 հրահանգ) | Վերանայել և ԵՄ չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի՝ 2012թ. դեկտեմբերի 6-ի ««Սրածայր գործիքներով վնասվելու և արյան հետ պատահական շփման դեպքում բուժաշխատողների մասնագիտական վարակվածության կանխարգելման» մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» 2837 - Ա հրամանը | 2026-2027թ թ. | Առողջ ապահ ության նախա րարութ յուն | Սրածայր գործիքներով վնասվելու և արյան հետ պատահական շփման դեպքում բուժաշխատողների մասնագիտական վարակվածության կանխարգելման վերաբերյալ ԵՄ չափանիշների համապատասխան հրամանի առկայություն | Հիվանդանոցներում և առողջապահության համակարգում սուր գործիքներից ստացված վնասվածքների կանխում | |
| **183.** | Էլեկտրամագնիսական դաշտերից առաջացող ռիսկերին ենթարկվող աշխատողների պաշտպանություն<br>(Խորհրդարանի և Խորհրդի և Խորհրդի 2013թ. հունիսի 26-ի 2013/35/ԵՄ հրահանգ) | Վերանայել և ԵՄ առողջապահության ոլորտին վերաբերվող չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. փետրվարի 6-ի ««Ռադիոիզոտոպային ճառագայթման աղբյուրների արտադրության կազմակերպություններում աշխատողների առողջության պահպանման» ՍանԿանՆ N 2.6.3-005-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 04-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջ ապահ ության նախա րարութ յուն | ԵՄ չափանիշներին համապատասխան հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **184.** | Աշխատավայրում անվտանգության և/կամ առողջության վերաբերյալ հրահանգին համապատասխան ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>92/58/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. փետրվարի 26-ի 2014/27/ԵՄ հրահանգ՝ թիվ 1272/2008 կանոնակարգ (ԵՀ)) | Սահմանել աշխատավայրում անվտանգության և/կամ առողջության վերաբերյալ հրահանգին համապատասխան ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջները ՀՀ օրենսդրությամբ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1.Աշխատավայրում անվտանգության և/կամ առողջության վերաբերյալ հրահանգին համապատասխան ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջներ սահմանող օրենսդրական կարգավորումներն ընդունված են ՀՀ օրենսդրությամբ<br>2.Պետական վերահսկողությունն իրականացված է | Աշխատավայրում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության համար ցուցանակների տեղադրման նվազագույն չափորոշիչների ամրագրում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **185.** | Հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների անվտանգության և առողջության պահպանության համար նվազագույն պահանջների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1992թ. նոյեմբերի 3-ի 92/91/ԵՏՀ հրահանգ) | Սահմանել հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմատիվները ՀՀ օրենսդրությամբ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1.Հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմատիվ ստանդարտները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ<br>2.Պետական վերահսկողությունն իրականացված է | 1.Հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների աշխատանքային միջավայրի, աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության միջոցների բարելավում<br>2.Արտադրական ռիսկերի կանխարգելման, աշխատանքի պաշտպանության ապահովման, ռիսկային գործոնների և դժբախտ դեպքերի ու մասնագիտական հիվանդությունների կանխարգելման, աշխատողների իրազեկման, | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ուսուցման ընդհանուր սկզբունքների և ցուցումների սահմանում | |
| **186.** | Վերգետնյա և ստորգետնյա հանքարդյունահանման արդյունաբերությունների աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պաշտպանության նվազագույն պահանջների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1992թ. դեկտեմբերի 3-ի 92/104/ԵՏՀ) | Սահմանել վերգետնյա և ստորգետնյա հանքարդյունահանման արդյունաբերությունների աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պաշտպանության նպատակով նորմատիվները ՀՀ օրենսդրությամբ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1.Վերգետնյա և ստորգետնյա հանքարդյունահանման արդյունաբերությունների աշխատողների անվտանգության ու առողջության պաշտպանության նվազագույն պահանջները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | 1.Վերգետնյա և ստորգետնյա հանքարդյունահանման արդյունաբերությունների աշխատողների աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովում և առողջության պահպանության միջոցների բարելավում<br>2.Արտադրական ռիսկերի կանխարգելում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **187.** | Աշխատավայրում քիմիական նյութերի հետ շփմանն առնչվող վտանգներից աշխատողների պաշտպանություն<br><br>(Խորհրդի 1998թ. ապրիլի 7-ի 98/24/ԵՀ հրահանգ) | Վերանայել և ԵՄ առողջապահության ոլորտին վերաբերվող չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. դեկտեմբերի 6-ի ««Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 27-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համապատասխանեցված հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **188.** | Պայթյունավտանգ միջավայրից առաջացող պոտենցիալ վտանգի ենթարկվող աշխատողների անվտանգության ու առողջության պահպանության բարելավում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 1999թ. դեկտեմբերի 16-ի 1999/92/ԵՀ հրահանգ) | ԵՄ առողջապահության ոլորտին վերաբերվող չափանիշների տեղայնացում | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | Անհրաժեշտության դեպքում փոփոխությունների կատարում կամ նոր իրավական ակտի մշակում | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |
| **189.** | Թրթռումից առաջացող ռիսկերին ենթարկվող աշխատողների պաշտպանություն<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2002թ. հունիսի 25-ի 2002/44/ԵՀ հրահանգ) | Վերանայել և ԵՄ առողջապահության ոլորտին վերաբերվող չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2006թ. մայիսի 17-ի ««Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը» ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին» թիվ 533-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համապատասխանեցված հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |
| **190.** | Աղմուկից առաջացող ռիսկերին ենթարկվող աշխատողների պաշտպանություն<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2003թ. փետրվարի 6-ի 2003/10/ԵՀ հրահանգ) | Վերանայել և առողջապահության ոլորտի ԵՄ չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի ««Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համահունչ հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սանիտարական նորմերը հաստատելու մասին» թիվ 138 հրամանը | | | | | |
| **191.** | Ուլտրամանուշակագույն, ինֆրակարմիր, լազերային ճառագայթումներից առաջացող վտանգներին ենթարկվող աշխատողների պաշտպանություն<br><br>(Խորհրդի 2006թ. ապրիլի 5-ի 2006/25/ԵՀ հրահանգ) | Վերանայել և առողջապահության ոլորտի ԵՄ չափանիշներին չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. օգոստոսի 15-ի ««Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» N 2.2-002-05 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 756-Ն հրամանը և ՀՀ առողջապահության նախարարի 2006թ. մայիսի 12-ի ««Աշխատատեղերում ուլտրամանուշակագույն ճառագայթման հիգիենիկ նորմերը» ՀՆ N 2.2.4-007-06 հաստատելու մասին» թիվ 493-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համապատասխանեցված հրամանների առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **192.** | Ձկնորսական նավերի վրա իրականացվող աշխատանքների մասով աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության նվազագույն պահանջների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1993թ. նոյեմբերի 23-ի 93/103/ԵՀ հրահանգ) | Առկա օրենսդրական դաշտի վերլուծություն և ձկնորսական նավերի վրա իրականացվող աշխատանքների մասով աշխատողների անվտանգության և առողջության պահպանության նվազագույն պահանջների սահմանում | 2029թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1.Ձկնորսության ոլորտում անվտանգության և առողջության նվազագույն պայմանները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ<br>2.Պետական վերահսկողությունն իրականացվում է | 1.Ձկնորսության ոլորտում աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության պայմանների ապահովում<br>2.Ձկնորսական նավերի վրա աշխատանքային և կյանքի հատուկ ու առանձնապես դժվար պայմանների պատճառով ծովային ձկնորսությամբ զբաղվող աշխատողների շրջանում մահվան ելքով պատահարների թվի նվազեցում | Տեխնիկական աջակցություն Թայեքս |
| **193.** | Աշխատավայրում մեջքի վնասվածք ստանալու ռիսկին առնչվող վտանգներից աշխատողների պաշտպանություն<br><br>(Խորհրդի 1990թ. մայիսի 29-ի 90/269/ԵՏՀ հրահանգ) | Վերանայել և առողջապահության ոլորտի ԵՄ չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. օգոստոսի 15-ի ««Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» N 2.2-002-05 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 756-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համապատասխանեցված հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **194.** | Աշխատավայրում քիմիական, ֆիզիկական և կենսաբանական ազդակների ներգործության ռիսկից աշխատողների պաշտպանություն<br><br>(Հանձնաժողովի 1991թ. մայիսի 29-ի 91/322/ԵՏՀ հրահանգ) | Վերանայել և առողջապահության ոլորտի ԵՄ չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. օգոստոսի 15-ի ««Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» N 2.2-002-05 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 756-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | ԵՄ չափանիշներին համապատասխանեցված հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |
| **195.** | Աշխատավայրում քիմիական ազդանյութերի հետ կապված ռիսկերից աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանություն<br><br>(Հանձնաժողովի 2000թ. հունիսի 8-ի 2000/39/ԵՀ հրահանգ) | Վերանայել և առողջապահության ոլորտի ԵՄ չափանիշներին համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. դեկտեմբերի 6-ի ««Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 27-Ն հրամանը | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ վերանայված հրամանի առկայություն | Աշխատավայրում ԵՄ չափանիշներին համահունչ առողջապահական նորմերի առկայություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **196.** | Երիտասարդ աշխատողների աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության պահանջների սահմանում<br><br>(Համաձայնագրի հոդված 84, 85, 274<br><br>Խորհրդի 1994թ. հունիսի 22-ի 94/33/ԵՀ հրահանգ, 94/33/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2014թ. փետրվարի 26-ի 2014/27/ԵՄ հրահանգ) | Սահմանել երեխաների, մասնավորապես՝ մինչև 15 տարեկան և մինչև 18 տարեկան անձանց համար աշխատավայրում անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ պահանջները ՀՀ օրենսդրությամբ | 2029թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1. Երիտասարդ աշխատողների աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության նվազագույն պահանջները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ<br>2. Պետական վերահսկողությունն իրականացվում է | 1.Աշխատող երեխաների, մասնավորապես մինչև 15 տարեկան և մինչև 18 տարեկան աշխատողների աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանման նվազագույն չափորոշիչների սահմանում, այդ թվում՝ պաշտպանելու համար ցանկացած աշխատանքից, որը կարող է վնասել նրանց անվտանգությանը, առողջությանը կամ ֆիզիկական, մտավոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը կամ նրանց կրթությանը<br>2.Երեխաների, մասնավորապես՝ մինչև 15 տարեկան և մինչև 18 տարեկան անձանց համար ազգային օրենսդրությամբ ԵՄ չափորոշիչներին համապատասխանող աշխատանքների արգելման և խիստ կարգավորման կանոնակարգերի սահմանում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **ԳԼՈՒԽ 11 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒԼՈՐՏՈՒՄ** | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **197.** | Քաղցկեղի դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացում և համագործակցություն վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց նկատմամբ հսկողության, այդ թվում՝ առողջապահության վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով, մասնավորապես՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցություն, միջազգային առողջապահական կանոնակարգերի ներդրում<br><br>(Համաձայնագրի հոդված 91 և 92) | 1.Առողջապահության նախարարի հրամանով հաստատել չարորակ նորագոյացություն ների դեմ պայքարի միջոցառումների ծրագրի հաստատել<br>2. Ստեղծել քաղցկեղի ռեգիստր<br>3.Մշակել կլինիկական ուղեցույցներ և պացիենտի վարման գործելակարգեր<br>4. Ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխան նոր պալիատիվ ծառայության կլինիկա<br>5. Ստեղծել մանկական պալիատիվ բաժանմունք | 2023թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1.Պացիենտի վարման գործելակարգերը և կլինիկական ուղեցույցները մշակված են<br>2.Քաղցկեղով պացիենտների բուժման և կյանքի վերաբերյալ քաղաքականության ծրագիրը մշակված է<br>3.Մանկական ամբուլատոր (շարժական) պալիատիվ խնամքի ծառայության պիլոտային ծրագիրը ներդրված է | Չարորակ նորագոյացություններից մահացության ցուցանիշի նվազում, վաղ հայտնաբեր ման ցուցանիշի բարելավում, ապրելիության ցուցանիշների բարելավում | |
| **198.** | Միջազգային առողջապահական կանոնների կայուն ներդրման ծրագրի մշակում և ներդրում<br><br>(Համաձայնագրի հոդված 92) | 1.Ընդունել և ներկայացնել «Հանրային առողջապահության անվտանգության գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում<br>2.Իրականացնել հանրային առողջապահության անվտանգության գործողությունների ծրագիր | 2024թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | Հանրային առողջապահության անվտանգության գործողությունների ծրագիրն ընդունված է | Միջազգային առողջապահական կանոնների կայուն ներդրում | Տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **199.** | Սկրինինգների և հիվանդությունների միասնական ռեգիստրների ստեղծում, փործարկում, մասնագետների վերապատրաստում, վերազինում և ամբողջական ներդրում:<br><br>(Համաձայնագրի հոդված 92) | Ստեղծել քաղցկեղի, շաքարային դիաբետի և հոգեկան առողջության հիվանդությունների սկրինինգի միասնական ռեգիստրներ իրականացնել մասնագետների վերապատրաստում | 2023թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1.Քաղցկեղի, շաքարային դիաբետի և հոգեկան առողջության հիվանդությունների սկրինինգի միասնական ռեգիստրները ստեղծվել են<br>2.Ընտանեկան բժիշկների, էնդոկրինոլոգների, սրտաբանների, հոգեբանները, մասնակցել են հիվանդությունների գրանցամատյանների շարունակական վերապատրաստմանը | Շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների և հոգեկան առողջության հիվանդությունների գրանցամատյանների ներդրում, մասնագետների վերապատրաստումների իրականացում | |
| **200.** | Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով նոր պատվաստանյութերի ներդրում<br><br>(Համաձայնագրի հոդված 92) | Ներառել ջրծաղիկի դեմ փուլային պատվաստումը ՀՀ պատվաստումների ազգային օրացույցում | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | Ջրծաղիկի դեմ պատվաստումը ամբողջապես ներառված է ՀՀ պատվաստումների ազգային օրացույցում և ջրծաղիկի դեմ պատվաստումների իրականացումը 12 ամսական երեխաների շրջանում մեկնարկած է | Ջրծաղիկով հիվանդացության նվազեցում և կանխարգելում | Տեխնիկական աջակցություն |
| **201.** | Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների դեմ պայքարի իրականացում<br><br>(Համաձայնագրի հոդված 92) | 1.Ընդունել «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը պատճառված վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենք, ինչպես նաև հարակից մի շարք օրենքներ<br>2.Իրականացնել ԱՀԿ ԾՊՇԿ-ի «Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի շրջանառությունը | 1.2020 թ. 4-րդ եռամսյակ<br>2.2026 թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1. «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը պատճառված վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքը, ինչպես նաև հարակից մի շարք օրենքներ ընդունված են<br>2. «Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի շրջանառությունը | Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | վերացնելու մասին» արձանագրության վավերացմանն ուղղված աշխատանքներ | | | վերացնելու մասին» արձանագրությունը վավերացված է | | |
| **202.** | Բուժօգնության որակի բարելավում<br><br>(Համաձայնագրի հոդված 91) | 1. Ներդնել բուժօգնության որակի բարելավմանն ուղղված նոր գործիքներ (որակի ցուցանիշներ, բժշկական հաստատությունների ինքնագնահատում, պացիենտների փորձառության գնահատում, անբարենպաստ դեպքերի գրանցում)<br>2. Ներդնել մշակված գործիքներ փորձարարական հաստատություն ներում<br>3. Ընդունել բուժօգնության որակի բարելավման վերաբերյալ վերապատրաստման ծրագիր | 2026թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | 1.Ներդրվել է «Որակի բարելավման ռազմավարություն և դրանից բխող միջոցառումների ծրագիր»<br>2.Ընդունվել են բուժօգնության որակի բարելավման գործիքներ<br>3.Բուժօգնության որակի բարելավման վերաբերյալ մշակվել է վերապատրաստման ծրագիր<br>4.Իրականացվել են բուժօգնության որակի թեմաներով բուժանձնակազմի վերապատրաստումներ | Բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավում | Տեխնիկական աջակցություն |
| **203.** | Առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրում<br><br>(Համաձայնագրի հոդված 91) | 1.Ստեղծել առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամ<br>2.Ներդնել առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի տեղեկատվական համակարգ<br>3.Հիմնադրամի կարողությունները ուժեղացնելու համար | 2027թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | Ներդրվել է թվային ժամանակակից լուծումներով առողջության համապարփակ ապահովագրության համակարգ | 1.Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի գործարկում<br>2.Առողջության համապարփակ ապահովագրության տեղեկատվական համակարգի գործարկում<br>3.Տեխնիկական սարքավորումներով հագեցած և վերապատրաստումներ անցած անձնակազմ ունեցող հիմնադրամի ստեղծում | Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեխնիկական և մարդկային ռեսուրսներ ավելացնել | | | | | |
| **204.** | Կրթության և վերապատրաստման համակարգերի, այդ թվում՝ հանրային/քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համակարգերի արդիականացում, ինչպես նաև որակի, վերաբերելիության և հասանելիության մակարդակի բարձրացում կրթության բոլոր աստիճաններում՝ վաղ մանկական կրթությունից ու խնամքից մինչև միջնակարգ և բարձրագույն կրթություն<br><br>(Համաձայնագրի հոդված 94 կետ (b)) | Ընդունել և արդիականացնել առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների, նեղ և լրացուցիչ մասնագիտացումների կազմակերպման սկզբունքները և դրանց ցանկերը | 2024թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | Վերանայվել և արդիականացվել է ԵՄ միասնական ցանկին համապատասխանեցված առողջապահության բնագավառի մասնագիտությունների ցանկը | Վերանայված և արդիականացված և ԵՄ միասնական ցանկին համապատասխանեցված առողջապահության բնագավառի մասնագիտությունների ցանկ | |
| **205.** | Բարձրագույն կրթության ոլորտում համապատասխանեցման և համակարգված բարեփոխումների գործընթացի խթանում<br><br>(Համաձայնագրի հոդված 94 | 1.Ստեղծել առողջապահության ոլորտում մարդկային ներուժի ռեգիստր<br>2.Ընդունել Առողջապահության և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարների «Բժշկական | 2024թ. 4-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | Առողջապահության ոլորտում առկա է մարդկային ներուժի ռեգիստր Համապատասխանեցվել են ռեզիդենտի կրթական գործընթացի միջազգային չափանիշները | Առողջապահության ոլորտում մարդկային ներուժի ռեգիստրի ստեղծում, Ռեզիդենտուրայի կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շուրջ համագործակցություն | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կետ (c)) | կրթության ոլորտում կլինիկական օրդինատուրայի հենքի վրա փորձարարական հետբուհական մասնագիտական կրթական ծրագիր ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» համատեղ հրաման<br>3.Մեկնարկել մանկաբուժության ռեզիդենտուրայի պիլոտային ծրագիր | | | | | |
| **206.** | Դիտանցման համակարգի ստեղծում<br><br>(98/83 ԵՀ հրահանգին փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2020թ. դեկտեմբերի 16-ի 2020/2184/ԵՄ հրահանգ) | 1.Վերազինել լաբորատորիաները<br>2.Ներդնել մոնիթորինգային գործիքներ | 2027թ. 3-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | 1.Ընդունված է մոնիթորինգի ծրագիր յուրաքանչյուր բնակավայրի համար<br>2.Կանոնավոր մոնիթորինգն իրականացված է<br>3.Գործառնական մոնիթորինգն իրականացված է | ԵՄ ստանդարտներին համապատասխան կահավորված դիտանցման համակարգ | Թայեքս<br><br>Թվինինգ |
| **207.** | Սպառողներին տեղեկատվության տրամադրման համար մեխանիզմի ստեղծում<br><br>(Համաձայնագրի հոդված 46<br><br>98/83ԵՀ հրահանգին փոխարինող՝ Խորհրդարանի և Խորհրդի 2020թ. դեկտեմբերի 16-ի 2020/2184/ԵՄ հրահանգ) | Կատարելագործել սպառողներին տեղեկատվության տրամադրման առցանց հարթակը (բջջային հաղորդագրություն, բջջային հավելվածի կիրառում) | 2027թ. 3-րդ եռամսյակ | Առողջապահության նախարարություն | Առցանց տեղեկատվական հարթակը կատարելագործված է | Սպառողներին մատակարարվող խմելու ջրին առնչվող տեղեկատվության հասանելիության ապահովում | Թայեքս<br><br>Թվինինգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **208.** | Թափոնների կառավարման հինգաստիճան ստորակարգությանը համապատասխան թափոնների կառավարման պլանների կազմում<br><br>(Խորհրդարանի և Խորհրդի 2008թ. նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգ՝ թափոնների մասին (V գլուխ)) | 1. Թափոնների կառավարման հինգաստիճան համակարգի ներդրմամբ մեթոդական ուղեցույցի մշակում և հաստատում<br>2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեղական պլանների կազմում | 2026թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 1. Աղբահանության ոլորտի լիազոր մարմնի՝ ՀՀ ՏԿԵՆ- ի գերատեսչական իրավական ակտով հաստատված մեթոդական ուղեցույց<br>2. Սահմանված կարգով ՏԻՄ-երի կողմից հաստատված աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեղական պլաններ | Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման գործառույթների կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորում | Տեխնիկական աջակցություն |
| **209.** | Աղբավայրերի շահագործման փուլում հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերի, նաև լքման ենթակա աղբավայրերի համար փակման և վերականգնման ընթացակարգերի սահմանում, ինչպես նաև աղբավայրերի շահագործման ծախսերի ձևավորման մեխանիզմի ստեղծում<br><br>(Խորհրդի 1999թ. ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգ՝ աղբավայրերի մասին՝ փոփոխություններով (12 և 13-րդ հոդվածներ)) | Աղբավայրերի շահագործման, այդ թվում՝ հսկողության, մշտադիտարկման և փակման ենթակա աղբավայրերի փակման ու վերականգնման ընթացակարգերի ընդունում | 2027թ. 2-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Աղբավայրերի շահագործման և մշտադիտարկման ընթացակարգերը հաստատված են | Աղբավայրերի բարելավված շահագործում | |
| **ԳԼՈՒԽ 12 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ** | | | | | | | |
| **210.** | Եվրոպական միության՝ Բարձրագույն կրթության օրակարգին և Եվրոպական | 1.Ընդունել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը և դրանից | 2029թ. 4-րդ եռամսյ | Կրթության, գիտու | «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի ընդունում և դրանից բխող | ԵՄ համապատասխան մրցունակ, դիմակայուն կրթական միջավայրի | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | բարձրագույն կրթության տարածքին (Բոլոնիայի գործընթաց) ՀՀ ինտեգրման շարունակականության ապահովում<br>(Համաձայնագրի հոդված 94 կետ (c)) | բխող ենթաօրենսդրական ակտերը<br>2.Շարունակաբար լավարկել բարձրագույն կրթության և գիտության համակարգի որակը, այդ թվում՝ վերասահմանելով բուհերի գործառույթները, հաշվետվողականության ու որոշումների կայացման թափանցիկության պահանջները, ֆինանսական ինքնավարության սահմաններն ու դրա երաշխիքները | ակ | թյան, մշակույթի և սպորտի նախարարություն | ենթաօրենսդրական ակտերն ընդունված են՝ առկա են դրույթներ բարձրագույն կրթության և գիտության համակարգի որակի լավարկման վերաբերյալ | ապահովում | |
| **211.2** | Ազգային որակավորումների շրջանակի մշակում՝ Եվրոպական որակավո-րումների շրջանակին միացած Տեղեկատվական կենտրոնների եվրոպական ցանցի և Ազգային ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնների (ՏԿԵՑ-ԱԱՃՏԿ) համայնքի շրջանակներում որակավորումների և մասնագիտացման ճանաչումն ու թափանցիկությունը բարելավելու նպատակով<br>(Համաձայնագրի հոդված 94 կետ (f)) | 1. Ընդունել ոլորտային որակավորումների շրջանակին համապատասխան ընտրված մասնագիտական կրթության ոլորտների ընդհանրական բնութագրերն ու մեթոդաբանությունը<br>2.Ընդունել ոլորտային որակավորման շրջանակի մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագրերը<br>3.Իրականացնել որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաս-տագրման գործընթաց և որակավորումների ազգային շրջանակի համապատաս-խանության գնահատում ու | 2029թ. 4-րդ եռամսյակ | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 1.Մշակված և հաստատված են մասնագիտական կրթության ոլորտների ընդհանրական բնութագրերն ու մեթոդաբանությունը<br>2. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատված են ոլորտային որակավորման շրջանակի մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագրերը<br>3. Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման ազգային զեկույցը մշակված, հաստատված և հրապարակված է, բարձրագույն կրթության որակավորումների տվյալների ազգային բազան ստեղծված է | Մասնագիտական և բարձագույն կրթության շրջանավարտների գիտելիքների և կարողունակությունների ճանաչելիության ապահովում Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակի (QF-EHEA) սահմաններում Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի պաշտոնական ճանաչում | Տեխնիկական և ֆինանսական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հավաստում համաեվրոպական ստանդարտներին, ինչպիսիք են՝ Որակավորումների եվրոպական շրջանակը (EQF) կամ Եվրոպական բարձրագույն կրթության ոլորտի որակավորումների շրջանակը (QF-EHEA) | | | | | |
| **212.** | «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքից բխող օրենսդրության հետագա զարգացում և փորձառությունների ներդրում՝ ԵՄ կողմից հաստատված ուղեցույցների, ինչպես նաև անդամ պետություններում տարածում գտած իրավակիրառ նորմերի մոտարկմամբ և փորձառությունների կիրառմամբ<br><br>(Համաձայնագրի հոդված 95) | Ընդունել «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր, որոնք կապահովեն ՀՀ երիտասարդական քաղաքականության մոտարկումը ԵՄ-ում հիմնական տարածում գտած փորձառություններին | 2029թ. 1-ին եռամսյակ | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Մշակված և հաստատված են համապատասխան ենթաօրենսդրական ակտերը | «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքից բխող օրենսդրական ակտերի առկայություն՝ ԵՄ կողմից հաստատված ուղեցույցների, ինչպես նաև անդամ պետություններում տարածում գտած իրավակիրառ նորմերի մոտարկմամբ | Տեխնիկական և ֆինանսական աջակցություն |
| | **ԳԼՈՒԽ 13 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ** | | | | | | |
| **213.** | «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին մասնակցություն<br><br>(Համաձայնագրի հոդված 97 կետ (e)) | 1. «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի շրջանակում միջոցառումների իրականացում<br>2.Ապահովել ԵՄ | Շարունական | Կրթության, գիտության, մշակույ | 1.«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա ծրագրին Հայաստանի | Հայաստանի մշակութային ստեղծագործական ոլորտների ինտեգրում եվրոպական մշակութային տարածքին | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ստեղծագործ ծրագրի «Մեդիա» բաղադրիչին միանալու նախապատրաստական աշխատանքներ | | թի և սպորտի նախարարություն | մասնակցության մասին» համաձայնագիրը ստորագրված է<br>2. Ստեղծագործ Եվրոպա Հայաստանի գրասենյակը գործում է<br>3.Ֆիլմարտադրության ոլորտում ներդրումների մասնակի վերադարձը կարգավորող ՀՀ կառավարության որոշումն ընդունված է<br>4. Նոր շրջափուլին ՀՀ ավելի լայն մասնակցության փաթեթը մշակված է | | |
| | **ԳԼՈՒԽ 14 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ** | | | | | | |
| **214.** | Սպորտի ոլորտում պատշաճ կառավարման և ազնիվ պայքարի ապահովում՝ ԵՄ-ի լավագույն փորձառություններին համապատասխան<br>(Համաձայնագրի հոդված 101) | 1. Լավարկել մարզական մրցումներում մեքենայությունների դեմ ուղղված պայքարի արդյունավետ կազմակերպման սկզբունքներն ու ընթացակարգերը<br>2. Վավերացնել «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և դրա կիրարկմանը միտված անհրաժեշտ գործողությունները<br>3. Շարունակաբար լավարկել Հայաստանի հակադոպինգային գործակալությունը ԵՄ-ում | 2026թ. 4-րդ եռամսյակ | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 1.«Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացված է ՀՀ կողմից<br>2.Համաշխարհային հակադոպինգային գործակալության կողմից արտոնագիրը տրամադրված է | ՀՀ-ում մարզական մրցումների ազնիվ պայքարի և հակադոպինգային համակարգի արդյունավետ գործունեության ապահովում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեղ գտած լավագույն փորձառություններին համապատասխան, այդ թվում՝ ներառելով թվայնացման գործընթացները | | | | | |
| ԳԼՈՒԽ 15 ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ | | | | | | | |
| **215.** | Բազմամակարդակ կառավարման մեխանիզմի ամբողջական ներդրում, տարածքային զարգացման գործողությունների ապահովման ծրագրային մոտեցումների մշակում և հաջող իրականացում, տարածքային զարգացման գործառնական ծրագրի (ՏԶԳԾ) կառավարման մեխանիզմի ներդրում և իրականացում<br><br>(Համաձայնագրի հոդված 105) | Սահմանել մարզպետների աշխատակազմերի կանոնադրություններ և աշխատակազմերի օպտիմալ կառուցվածքներ | 2022թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Կանոնադրությունները և աշխատակազմերի օպտիմալ կառուցվածքները սահմանված են | Տարածքային կառավարման մարմինների դերի բարձրացում, գործառույթների հստակեցում | |
| **216.** | Տարածքային զարգացման նոր դրամաշնորհային սխեմայի մշակում և ներդրում՝ ԵՄ-ի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ, որը պետք է մշակվի Տարածքային զարգացման ծրագրերի պիլոտային դրամաշնորհային սխեմաների փորձի հիման վրա | Ընդունել տարածաշրջանային զարգացման ծրագրերի փորձնական դրամաշնորհային սխեմաների փորձի վրա հիմնվելով տարածքային զարգացման նոր դրամաշնորհային ծրագրեր | 2022թ. 4-րդ եռամսյակ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Տարածքային զարգացման ծրագրերն իրականացված են | Տարածքային համաչափ զարգացում | Փորձագիտական և տեխնիկական աջակցություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | (Համաձայնագրի հոդված 105) | | | | | | |
| ԳԼՈՒԽ 16 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ | | | | | | | |
| **217.** | Վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին գործող օրենսդրության վերանայում, լիազոր մարմնի հաստատում. համապատասխան մարմինների միջև համակարգման արդյունավետ մեխանիզմների, կառուցվածքների մասին տեղեկատվության գրանցման և խոշոր վթարների մասին զեկուցման համակարգերի ստեղծում<br><br>(Համաձայնագրի հոդված 4,6, 7, 10, 13,14, 16, 18<br><br>Խորհրդարանի և Խորհրդի 2012թ. հուլիսի 4-ի 2012/18/ԵՄ հրահանգ) | Վերանայել գործող օրենսդրությունը, հաստատել լիազոր մարմնին | 2027թ. 1-ին եռամսյակ | Ներքին գործերի նախարարություն | 1. Վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին գործող օրենսդրությունը վերանայված է<br>2. ՀՀ օրենսդրությամբ համակարգող մարմինների կամ մեխանիզմների առկայությունը սահմանված է<br>3. Ռիսկային օբյեկտների գրանցման և խոշոր վթարների վերաբերյալ զեկուցման վերաբերյալ պարտավորությունն օրենսդրությամբ ամրագրված է | Վտանգավոր նյութերի առկայությամբ պայմանավորված խոշոր վթարների վտանգների վերահսկում և վթարների զեկուցման և ռիսկային օբյեկտների գրանցման տվյալների միասնական համակարգի ստեղծում | Ծվինինգ |
| ԲԱԺԻՆ 5. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ | | | | | | | |
| ԳԼՈՒԽ 1 ԱՌԵՎՏՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **218.** | Շինարարական ստանդարտների և նորմերի արդիականացում<br><br>(Համաձայնագրի հոդված 85 և 130) | 1. Կառուցել, վերակառուցել և արդիականացնել տրանսպորտային ենթակառուցվածքներ (ավտոմոբիլային ճանապարհներ, օդանավակայաններ, երկաթուղիներ, մետրոպոլիտեն) և ինժեներական համակարգեր<br>2. Ապահովել շենքերի և շինությունների հասանելիությունը և մատչելիությունը (շենքերի և շինությունների հասանելիություն, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղաշարժման մատչելիություն) | Շարունակական | Քաղաքաշինության կոմիտե | 1.Շինարարական նորմերն ընդունված են և դրանց վերաբերյալ իրազեկումն ապահովված է<br>2.Շենքերի և շինությունների հասանելիության և մատչելիության մակարդակը սահմանված է | Շինարարական նորմերին և չափորոշիչներին համապատասխան տրանսպորտային և ինժեներական համակարգերի և ենթակառուցվածքների բարելավում | Տեխնիկական աջակցություն<br><br>Թայեքս |
| **ԳԼՈՒԽ 2 ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ** | | | | | | | |
| **219.** | Անհետացման եզրին գտնվող վայրի բուսական և կենդանական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (CITES) դրույթների ամբողջական կիրարկում և դրանց խախտման դեպքում առևտրի արգելում<br><br>(Համաձայնագրի հոդված 277) | 1.Ընդունել «Բուսական աշխարհի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ,<br>2.Ընդունել «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ (տույժ, տուգանքների ներդրման, ապօրինի տնօրինվող և առևտրում ընդգրկված տեսակների առգրավման վերաբերյալ) | 2027թ. 4-րդ եռամսյակ | Շրջակա միջավայրի նախարարություն | Ոլորտը կանոնակարգող օրենսդրական նախագծերն ընդունված են և գործում են | ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է CITES կոնվենցիայի պահանջներին և դասակարգվում է 1-ին կատեգորիայում | Թայեքս |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3.Ընդունել «ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ<br>4.Ընդունել գիտական և կառավարող մարմինների գործառույթների ամրագրման վերաբերյալ շրջակա միջավայրի նախարարի հրամանի նախագիծը | | | | | |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



09.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ